# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

32ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 24 (1574) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 30, 2012
VOLUME 32, NO. 24 (1574) SATURDAY, JUNE 30, 2012

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԾԽ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

*Միջազգային ճգնաժամային խումբը (ՄՃԽ) Հայաստանի մասին հրապարակած է իր հերթական զեկոյցը, ուր կ՚անդրադառնայ Մայիս 6-ի խորհրդարանական ընտրութիւններուն, 2013-ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն, երկրին մէջ մամուլի իրադրութեան, ինչպէս նաեւ շարք մը յանձնարարականներ կ՚առաջարկէ ՀՀ իշխանութիւններուն՝ առկայ խնդիրները լուծելու համար:*

*Զեկոյցին մէջ կը նշուի, որ Մայիսին կայացած խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ Հայաստանը կը պատրաստուի 2013 թուականի՝ առանցքային նշանակութիւն ունեցող նախագահական ընտրութիւններուն, որոնք պիտի կանխորոշեն, թէ որքանով երկիրը ձերբազատուած է երկու տասնամեակ շարունակ ընտրակեղծիքներով իրականացուող ընտրութիւններէն եւ թէ որքանով կրնայ ձեւաւորել իշխանութիւն, որուն օրինականութիւնը թոյլ կու տայ իրականացնել համընդգրկուն բարեփոխումներ եւ կարգաւորել Ատրպէյճանի հետ առկայ խնդիրները:*

*«Նախագահ Սերժ Սարգսեանի համար ատիկա պատեհ հնարաւորութիւն է ընտրողներուն առջեւ ցուցաբերելու պետական գործիչի իմաստութիւն՝ յառաջիկային սպասուող ընտրութիւններէն*

*Շար.ը էջ 4*

## ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ ՀԱԶԱՐԱՒՈՐՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ



*Պէյրութի մէջ հազարաւոր հայորդիներ ներկայ եղան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 125–ամեակի տօնակատարութեան*

*Հայ քաղաքական կուսակցութիւններու նախավկայ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը 125 տարեկան է: Սովորաբար երկար թուացող այս ժամանակաշրջանը խորքին մէջ ոչինչ է հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի ժամանակագրութեան մէջ: Բայց այդ կարճ միջոցին Հնչակեան Կուսակցութիւնը ծաւալած է փայլուն գործունէութիւն, ծառայելով հայ ժողովուրդի հիմնական նպատակներուն:*

*Զորեքշաբթի, Յունիս 20-ի երեկոյեան «Ֆորում Տը Պէյրութ»-ի սրահին մէջ հանդիսաւորապէս նշուեցաւ Մայր Կուսակցութեան հիմնադրութեան 125–ամեակը: Հանդիսութիւնը կը հովանաւորէր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը: Կը նախագահէր Լիբանանի Հայոց Բարեջան առաջնորդ Գերաշնորհ Գեղամ Արք. Խաչերեան: Բազմահազար հայորդիներ ապրեցան բացառիկ վայելքի եւ հպարտութեան պահեր: Հանդիսութեան ներկայ էին հայ կաթողիկէ պատրիարքութեան օգնական եպիսկոպոս արհիապատիւ հայր Յովհաննէս Թէյրուզեան, ՄԱՀԱԵՄ-ի Կեդրոնական Մարմնի ատենապետ եւ Հայկազեան համալսարանի նախագահ, վերապատուելի դոկտ. Փօլ Հայտոսթեան, ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ, Լիբանանի Խորհրդարանի երեսփոխան ընկ. Սեպուհ Գալփաքեան, Կեդրոնական Վարչութեան անդամներ ընկերներ Տոքթ. Եղիկ Ճէրէճեան, Յակոբ Տիգրանեան, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանութեան հիւպատոս Կարէն Մաթէւոսեան, Խորհրդարանի անդամներ՝ Ժան Օղասապեան, մեթր Սերժ Թուրսարգիսեան, Արթիւր Նազարեան, Շանթ Ջինչինեան, Լիբանանի Կեդրոնական Դրամատան փոխկառավարիչ*

*Շար.ը էջ 5*

## ՅԱՍՄԻԿ ՊԱՊԵԱՆ ԻՐ ԱՐՈՒԵՍՏՈՎ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԱՌԻՆՔՆԵՑ ՄԵՐ ՍՐՏԵՐԸ

**Տ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

*Ուրբաթ 22 Յունիս 2012ին, վայելքը ունեցանք ըմբոշխնելու Յասմիկ Պապեանի երգահանդէսը, որ տեղի ունեցաւ Փասատինայի գեղակառոյց The Ambassador Հանդիսասրահի մէջ, որ բերնէ բերան լեցուն էր գեղարուեստասէր հայ թէ օտար լայն հասարակութեամբ մը: Ձեռնարկը, գործակցաբար նախաձեռնուած էր Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելոսի Աւագ Հիւպատոսութեան եւ «Արուեստը Երախաներու համար» ծանօթ միութեան կողմէ:*



*Երեւանի Կոմիտասի Բարձրագոյն Երաժշտանոցէն իբրեւ ջութակահար եւ ապա իբրեւ երգչուհի վկայուելէ եւ իր հայրենի ազգային օփերայի բեմահարթակներէ ներս ստանձնած կարեւոր դերերուն փայլուն յաջողութիւններէն ետք՝ Յասմիկ Պապեան կը ներգրաւուի միջազգային համբաւ ունեցող օփերաներու բեմերէ ներս, աշխարհի չորս ծագերուն, սկսեալ Վիէննայէն՝ Սպանիա, Ֆրանսա, Գերմանիա: Կը բարձրանայ Մոսկուայի, Թոքիոյի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու, եւ բազմաթիւ այլ երկիրներու համբաւաւոր Օփերայի բեմերը, միշտ ստանձնելով օփերայի գլխաւոր հերոսուհիի դերը: Նոյնպէս, Յասմիկ Պապեան փնտռուած երգչուհին կը հանդիսացած ներկայացման համերգներէ*

*Շար.ը էջ 8*

## ՀԱՅԱՍՏԱՆԷ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

*Այս տարուայ առաջին 5 ամիսներուն Հայաստանէ դուրս եկածներու թիւը մօտ 80 հազարով աւելի է քան՝ ժամանակները:*

*Այս տուեալները հրապարակած է Տարածքային կառավարման նախարարութեան գաղթականական պետական ծառայութիւնը:*

*Ժողովրդագիր Ռուբէն Եգանեանի կարծիքով, մեկնածներու մէկ մասը աշխատանքի համար դուրս եկողներէն են, որոնք սովորաբար տարուայ վերջին կը վերադառնան: Միւս մասը վերջնականապէս արտագաղթողներն են:*

*Պետական նոյն ծառայութեան համաձայն, անցեալ տարի Հայաստանէն մեկնած են ու չեն վերադարձած՝ 44 հազար հայաստանցիներ: Իսկ 2000-20011 թուականներուն երկիրէն արտագաղթածներու թիւը կը կազմէ շուրջ 236 հազար անձ:*

*Ժողովրդագիր Եգանեանի կարծիքով, յառաջիկային Հայաստանի բնակչութեան թուաքանակի վրայ բացասական իմաստով կը սկսի ազդել ոչ միայն արտագաղթը, այլեւ ծնելիութեան նուազումը:*

*Ռուբէն Եգանեան կը տեղեկացնէ, որ 2007 թուականին իր ղեկավարութեամբ կատարուած հետազօտութեան արդիւնքներով՝ եթէ գործօնները զարգանան լաւատեսական եղանակով, ապա 2057 թուականին Հայաստանի բնակչութիւնը կ՚ըլլայ 2.9 միլիոն:*

*«Սակայն ներկայում Հայաստանի բնակչութիւնն այդ թուից արդէն պակաս է», - աւելցուց ժողովրդագիրը՝ շարունակելով. - «Իսկ ամենավատատեսական տարբերակով՝ երբ միգրացիան շարունակւում է, ծնելիութեան անկումը շարունակւում է, իրավիճակը չի կարգաւորւում, ապա□ մօտ 1 միլիոն 300 հազարի մասին էր խօսք գնում: Ամբողջ ցաւն այն է, որ դատելով այսօրուայ զարգացման իրողութիւններից, աւելի ռէալիստական է թւում վատատեսական տարբերակը, քան լաւատեսականը»:*

*Գաղթականական պետական ծառայութեան պետի տեղակալ Իրինա Դաւթեանը «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցեց, որ Հայաստանի պետական մարմինները դժուարութիւններ ունին յստակ գնահատական տալու, թէ Հանրապետութենէն որքան մարդ արտագաղթած է:*

# ՕԼԻԳԱՐԽԻԱՅՈՎ, ԿԱՄ ՕԼԻԳԱՐԽԻԱՅԻ ՎՐԱՅ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի հասարակական-քաղաքական քննարկումներում կայ տարածուած տեսակէտ, որ օլիգարխիան խնդիր չէ, եւ իշխանութիւնն է այդ խնդիրը ներդնում հասարակական-քաղաքական օրակարգ, այդպիսով փորձելով շեղել հանրութեանը եւ ստեղծել վատ շրջապատի եւ բարի թագաւորի «հեքիաթ»: Այդ մօտեցման տրամաբանութեամբ էլ, օլիգարխիայի խնդրի շօշափումը եւ այն հրատապութեան համատեքստում դիտարկումը ներկայացւում է իբրեւ իշխանութեան՝ տուեալ դէպքում Սերժ Սարգսեանի «ջրաղացի ջուր»:

Դա թերեւս իրավիճակի, ու նաեւ Հայաստանի իշխանական համակարգի որոշակի թիւր կամ ոչ ամբողջական ընկալման հետեւանք է:

Բանն այն է, որ երբ առաջ է բերւում օլիգարխիայի խնդիրը, դա ամենեւին չի նշանակում, որ իշխանութեան, տուեալ դէպքում Սերժ Սարգսեանի վրայից հանւում է պատասխանատուութիւնն առկայ երեւոյթների եւ արատների համար, այդ ամէնը բարդելով նրա օլիգարխիկ շրջապատի վրայ:

Հակառակը, Սերժ Սարգսեանի վրայ հենց դրւում է այդ օլիգարխիկ շրջապատի հարցը լուծելու եւ երկրում իրական հասարակարգի համար անհրաժեշտ առաջնային եւ հիմնարար քայլերը կատարելու պատասխանատուութիւնը:

Բանն այն է, որ օլիգարխիան, ձեւաւորուելով կենտրոնական իշխանութեան կամքով՝ դրան սպասարկելու համար, տարիների ընթացքում հասել է մի վիճակի, երբ արդէն ի զօրու է որոշակիօրէն կամք թելադրել իշխանութեանը եւ հանդիսանում է ոչ միայն կատարածու, այլ նաեւ պահանջատէր՝ թէկուզ իր կատարածի դիմաց:

Օլիգարխիկ համակարգի միջոցով է հիւսուել այն ցանցը, որը կաթուածահար է արել հասարակական եւ քաղաքացիական կամքը Հայաստանում, որը խաղալով մարդկային բնազդների վրայ, կարողացել է ջլատել հասարակութեան արժանապատուութեան հիւսուածքները, ինչի շնորհիւ էլ իրաւունքի համար պայքարող քաղաքացու դէմ կարող է դուրս գալ օլիգարխի իրաւունքի համար պայքարող քաղաքացին, որքան էլ որ նրան ստրուկ, ճորտ, անարժանապատիւ կամ այլ որակում տրուի:

Օլիգարխիկ համակարգի շնորհիւ է, որ բոլորը, կամ գրեթէ բոլորը՝ անգամ այդ ճորտերն ու ստրուկներն իրենք իրենց ներսում, խոհանոցում կամ բաղնիքում դժգոհ են իրավիճակից, իրենց կարգավիճակից, բայց միեւնոյն ժամանակ պատրաստ են դուրս գալ նրանց դէմ, ովքեր պայքարում են այդ իրավիճակը փոխելու համար, որովհետեւ կան հասկանալի վախերը օլիգարխիայից, թելերը, որ հիւսել է օլիգարխիան:

Այդ ամէնն արել է իշխանութիւնը, հետեւողականօրէն, տարիներ շարունակ, 90-ականների փէոդալապետութիւնը ինստիտուցիոնալացնելով քրէաօլիգարխիայի տեսքով, որպէսզի այդ համակարգի վրայ էլ ապահովի իր յարատեւութիւնը: Բայց, այդ ամէնն անխուսափելիօրէն բերել է մի իրավիճակի, երբ արդէն չկայ մէկ իշխանութիւն, կամ մէկ համակարգ, որտեղ բուրգի գագաթը ոչ թէ թագաւորն է, այլ «պախանը»: Իսկ դա ենթադրում է բոլորովին այլ բովանդակութիւն: Թագաւորը հրամայում է եւ վերջ, իսկ «պախանը» պէտք է ամէն ինչ անի «ճշտով», այլապէս կը լուծեն «պախանի» հարցը:

Ահա թէ ինչու է Հայաստանի թիւ մէկ խնդիրը օլիգարխիկ կամ քրէաօլիգարխիկ համակարգը, եւ ահա թէ ինչու այդ հարցը չի լուծուի Սերժ Սարգսեանին հեռացնելով, որովհետեւ օլիգարխները ոչ թէ նրա, այլ իրենց իշխանութեան, արտօնեալ դիրքի համար են ներկայում պայքարում եւ գործադրում իրենց ջանքերը:

Անձերն այստեղ էական չեն, էական է համակարգի կառուցուածքը: Կառուցուածքն ապամոնտաժելու պարագայում անձերը յայտնւում են բոլորովին այլ իրավճակում:

Եւ դա ամենեւին մէկ օլիգարխի տնտեսութեան կամ համակարգի տարբերակը չէ: Հայաստանում այդօրինակ տարբերակը գործնականում ընդհանրապէս հնարաւոր չէ, որովհետեւ երկիրն այլեւս չունի ոչ միայն մի խումբ, կամ մէկ օլիգարխի, անգամ կէս օլիգարխի համակարգային ռեսուրս: Հայաստանում համակարգային հասարակական-քաղաքական ճգնաժամ է պետութեան եւ հասարակութեան հենց քրէաօլիգարխիկ կառուցուածքի հետեւանքով: Իսկ այդ կառուցուածքի պայմաններում կապ չունի օլիգարխների թուաքանակը՝ 11, թէ 1 օլիգարխ: Էականը համակարգի բնոյթն է, որ պահանջում է շուտափոյթ քաղաքացիականացում, պետական աղէտից խուսափելու համար:

Աւելին, եթէ օլիգարխիայի ապամոնտաժման վարկածը դիտւում է Սերժ Սարգսեանի «ջրաղացի» ջուր, ապա «մէկ օլիգարխի» տարբերակն էլ նոյն տրամաբանութեամբ կարող է դիտուել ասենք 11 օլիգարխի «ջրաղացի ջուր»: Մինչդեռ, խնդիրը զուտ համակարգային է, ոչ թէ մաթեմատիկական:

Օլիգարխիան գիտակցում է, որ ներկայիս տնտեսական սպառման, տեղեկատուական կոմունիկացիաների զարգացման եւ աշխարհաքաղաքական դինամիկայի պայմաններում այսպէս ասած օլիգարխիայի եւ քաղաքական իշխանութեան շահերի տարանջատման անհրաժեշտութիւն է առաջանում: Սերժ Սարգսեանը շատ լաւ է պատկերացնում, որ օլիգարխիկ համակարգն այլեւս աշխատում է իր իշխանութեան դէմ: Այստեղ իշխանութեան խնդիր է, ոչ թէ Սարգսեանի բարի կամքի: Ներկայիս իրավիճակը նրան գուցէ ձեռնտու է, բայց այս իրավիճակը երկար պահպանուել չի կարող՝ կամ նա ստիպուած կը լինի տեղի տալ օլիգարխիային վերջնականապէս, կամ օլիգարխիան ստիպուած կը լինի տեղի տալ հասարակութեանը: Սերժ Սարգսեանն էլ պէտք է ընտրի՝ կամ հասարակութեան հետ է մնում իշխանութեան, կամ տեղը գիջում քրէաօլիգարխիայի հետ միասին:

Հասկանալի է, որ այդ ընտրութիւնը նրա համար չափազանց բարդ է, քանի որ նա ինքն այդ համակարգի մասն է, հանդիսացել է այդ համակարգի առաջատար դէմքերից, այսպէս ասած համակարգողներից մէկը Ռոբերդ Քոչարեանի նախագահութեան շրջանում, ինչպէս նաեւ եղել է Տէր-Պետրոսեանի նախագահութեան շրջանում այդ համակարգի սաղմնաւորման ակունքներում, իսկ այժմ էլ բուրգի գագաթն է եւ կրում է իրավիճակի անմիջական պատասխանատուութիւնը:

Բայց, Սարգսեանը ներկայում այլ ելք չունի: Մանեւրելն ու հասարակութեան եւ օլիգարխիայի միջեւ ժամանակ ձգելը՝ պարբերաբար մէկ այս, մէկ այն կողմ ռեվերանս անելով, կարող է ունենալ առաւելագոյնը միջնաժամկէտ էֆեկտ, իսկ երկարաժամկէտ առումով ընդամէնը բարդացնում է Սերժ Սարգսեանի վիճակը: Հարցը նրա համար դրուած է «օլիգարխիայով, կամ օլիգարխիայի վրայ»:

«ԼՐԱԳԻՐ»

# «ԻՍԿ ՄՆԱՑԱԾԸ «ՅՈՐՈՎԵԼՆԵՐ» ԷԻՆ»

ԿԱՐՄԷՆ ԴԱԻԹԵԱՆ

Նոր խորհրդարանը հնաբնակներիս յիշեցրեց 98-ի պառլամենտը, ուր կար բանավէճ, ինչն էլ կենդանի էր պահում քաղաքական կեանքը: Կոնկրետ դէպքում պէտք է ֆիքսել, որ վերջապէս՝ 99-ի Հոկտեմբերի 27-ից այս կողմ, յաջողուեց պառլամենտը վերադարձնել իր պատկերին:

Կառավարութեան ծրագրի քննարկումը բացայայտումների ուրոյն բանալի դարձաւ խորհրդարանում առկայ քաղաքական բոլոր ուժերի էպիկրիզը հասկանալու համար:

Սկսենք ՀՀԿ-ից: Քննարկումների առաջին օրը, ինչպէս նախագահական ընտրութիւններին, ՀՀԿ-ում «մոնո» տարբերակն էր, հիմնական «քարոզիչը» Տիգրան Սարգսեանն էր, որն իր վրայ վերցրեց բաւականին «մարդաշատ» ընդդիմադիրների հարուածները, քաղաքակիրթ պատճառաբանութիւններով հետ մղելով դրանք «ճակատային» բոլոր գծերում, առաջին հերթին՝ տնտեսութեան:

Վարչապետը պատասխանեց բոլորին, այդ թւում եւ՝ Վարդան Օսկանեանին, կոալիցիայից նոր դուրս եկած, ոտները դեռ իշխանութիւն, յստակ հասկացնելով, որ հայաստանեան տնտեսական ծանր կացութեան եւ ճգնաժամի պատճառներից գլխաւորը տնտեսութեան դիվերսիֆիկացուած չլինելն էր՝ էլիտար շինարարութեան իրականացմամբ: Գաղտնիք չէ. շինարարութիւնն այդ իրականացնում էին Օսկանեանի «հայրերն» ու «որդիները»:

Վարչապետը «սեւով սպիտակի վրայ» ասաց նաեւ, թէ «պատճառներից յաջորդն էլ այն էր, որ չենք կարողացել ապահովել արդարացի բիզնես-միջավայր եւ խոշոր բիզնեսը բերել հարկային դաշտ, եւ եթէ հիմա էլ չբերենք, մեր ապագայ ծրագրերն իսկապէս տապալուելու են», եւ որ խոշոր բիզնեսը հարկային դաշտից խուսափելու համար չպէտք է թաքնուի տարբեր տիպի ձեռնարկութիւնների «տակ», ուստի պէտք է տեղի ունենայ ստուերային տնտեսութեան կրճատում:

Չնայած Գագիկ Ծառուկեանը չէր մասնակցում խորհրդարանի նիստերին, այնուհանդերձ, բոլորը հասկացան, թէ ինչ է ասւում եւ ում է ասւում: Ընդհանուր առմամբ: Յիշենք՝ Ծառուկեանն անտէր մնացած ԲՀԿ ֆրակցիային հեռուից ասել էր՝ չի գալու ԱԺ նիստերին, որովհետեւ վարչապետ է Տիգրան Սարգսեանը:

Ինչպէս երեւաց խորհրդարանական քննարկումներից, բոլորը դիմացան նրա բացակայութեան վշտին, նախ՝ նայելով Ծառուկեանի ընկերոջ՝ Դաւիթ Ռոստոմեանի որդու, սպորտի ու երիտասարդութեան նորանշանակ նախարար Հրաչեայ Ռոստոմեանի կողմը, ինչպէս նաեւ փարատելով, որ ԲՀԿ-ն այդպէս էլ ընդդիմադիր լինելու մասին յայտարարութիւն չարեց: Եւ ապա՝ ծաւալուած հետաքրքիր քննարկումներով, որոնց եթէ ներկայ լինէր ԲՀԿ-ի առաջնորդը, շատ հետաքրքիր էր լինելու՝ ինչ էր ասելու:

Ի դէպ, ընդդիմութիւն չլինելու մասին չարուած յայտարարութեանն անդրադարձաւ նաեւ ՀՀԿ-ական Արմէն Աշոտեանը: Սա արդէն երկրորդ օրը, երբ ՀՀԿ-ն բալանսը փոխեց իր օգտին՝ կարգին մաստեր-կլաս ցոյց տալով: Հարկաւորը պէտք է մատուցել ՀՀԿ-ին, որն սկզբում «տագ արեց» այդ քննարկումների ժամանակ, ադեկւատութիւն չդրսեւորեց, «ուսուցչական-քյարթու» ելոյթներ ունեցաւ, երկրորդ օրը «վաբանկ» գնալով՝ տապալեց ընդդիմադիրների կառուցած կարթագէնը:

Քաղաքական ճեղքում ապահովեց ֆէյսբուքահայութեանը քաջ յայտնի Արմէն Աշոտեանը, որը քաղաքակիրթ, գրագէտ, անվիճարկելի մի շարք թեզեր առաջ քաշեց՝ առաջին հերթին փարատելով սարսափը, որը «պատել» էր շատերին, թէ մեծամասնութիւնը՝ կոալիցի-

Շար.ը էջ 17

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ.- «ԲՀԿ-Ն ՊԷՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՅ ԴԻՄԱՆԱԼ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ»


Հայաստանի առաջին նախագահ ՀԱԿ-ի ղեկավար Լեւոն Տէր-Պետրոսեան

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը Յունիս 26-ին իր ղեկավարած ուժի հրաւիրած հանրահաւաքում հնչեցրած ելոյթում կարծիք յայտնեց, որ ընդդիմութիւն դառնալու՝ ԲՀԿ-ի վճռականութիւնը նրա գոյութեան եւ քաղաքական ապագայի միակ երաշխիքն է:

«Իշխանութիւնը, բացի քարոզչական միջոցներից, բնականաբար, օգտագործելու է, եւ կարծես թէ, արդէն իսկ սկսել է օգտագործել հարկային, ուժային եւ վարչական ճնշումների մեխանիզմները», - վերլուծելով ընթացիկ քաղաքական զարգացումները՝ ասաց ՀԱԿ առաջնորդը՝ եզրակացնելով, - «Լուրջ քաղաքական գործօն դառնալու յաւակնութիւն ունեցող ցանկացած ուժ, տուեալ պարագայում «Բարգաւաճ Հայաստանը», պէտք է կարողանայ դիմանալ այդ ճնշումներին եւ չվախենայ դրանցից: Եթէ այս ամենից յետոյ «Բարգաւաճ Հայաստանը» հնազանդութիւն յայտնի Սերժ Սարգսեանին, ապա դա կը լինի նրա, որպէս քաղաքական գործօնի, վերջը»:

Անդրադառնալով այն գնահատականներին, որ ԲՀԿ-ի հետեւում կանգնած է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանը, կամ որ ԲՀԿ-ն իրականում ընդդիմութիւն չէ, քանի որ այդ մասին համապատասխան յայտարարութիւն չի արել, Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ «Քոչարեանի վերադարձի սպառնալիք» իրականում գոյութիւն չունի եւ ընդդիմութիւն լինել-չլինելը բնորոշւում է ոչ թէ այդ մասին արուած յայտարարութեամբ, այլ որեւէ քաղաքական ուժի կոնկրետ կարգավիճակով:

«Մէկանգամընդմիշտ պէտք է արձանագրել, որ Քոչարեանի վերադարձի սպառնալիքով ժողովրդին սարսափեցնելը հետապնդում է մէկ ակնյայտ նպատակ, այն է՝ Սերժ Սարգսեանի, որպէս չարեաց փոքրագոյնի, իշխանութեան ամրապնդումը», - ասաց ՀԱԿ առաջնորդը՝ յաւելելով, թէ ժողովրդավարական երկրներում բոլոր այն կուսակցութիւնները, որոնք կառավարութեան մաս են կազմում, իշխանութիւն են, իսկ որոնք դուրս են կառավարութիւնից, ընդդիմութիւն են, անկախ այն բանից՝ այդ մասին յայտարարութիւն կ՚անեն, թէ ոչ:

«Իմ կարծիքով, այնքան էլ յաջող չէ նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան «իշխանութեան այլընտրանք» ինքնայորջորջումը, քանի որ բոլոր ընդդիմութիւններն էլ ինքնըստինքեան իշխանութեան այլընտրանք են: Որեւէ կուսակցութեան համար ընդդիմութիւն լինելը ոչ թէ նուաստացում է, այլ պատիւ, ուստի ամենեւին պէտք չէ խրտնել այդ բառից», - նաեւ ասաց ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

## ՀՅԿ-ԻՆ ՉԷՆ ՄՏԱՀՈԳԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իշխող Հանրապետական կուսակցութեանը չեն մտահոգել կառավարութեան ծրագրի շուրջ խորհրդարանում ծաւալուած սուր քննադատութիւնները:

Խորհրդարանի կողմից ձայների 75 կողմ, 47 դէմ, 1 ձեռնպահ յարաբերակցութեամբ կառավարութեան հնգամեայ գործունէութեան ծրագրի ընդունումից յետոյ Հանրապետական կուսակցութեան գործադիր մարմնի նիստը նախագահ Սերժ Սարգսեանի գլխաւորութեամբ անցել է բարձր տրամադրութեամբ, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Ազգային ժողովի հանրապետական փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը՝ հերքելով այն լուրերը, թէ նախագահը մտահոգուած է եղել խորհրդարանական երկօրեայ քննարկումների ժամանակ տիրող լարուած մթնոլորտից:

«Հակառակը, բոլորիս տրամադրութիւնը շատ բարձր է եղել, որ եղել է կառուցողական քննարկում, որ կոալիցիոն ուժերը շատ բարձր մակարդակով նաեւ մեր փաստարկներն են յստակ ներկայացրել: Մենք շատ լաւ եւ դրական ենք վերաբերւում առողջ, սուր քննադատութեանը եւ գտնում ենք, որ այսօր Հայաստանի Հանրապետութեան 5-րդ գումարման Ազգային ժողովը կարող է դառնալ առողջ քաղաքական մտքերի գեներացման կենտրոն», - ասաց Շարմազանովը:

Էդուարդ Շարմազանովը կարեւորեց այն հանգամանքը, որ եթէ նախկինում արտախորհրդարանական ընդդիմութիւնը քննադատում էր Ազատութեան հրապարակից եւ իրենք նրանց պատասխանում էին մամուլի միջոցով, ապա այժմ խորհրդարանի դահլիճում ուղիղ շփումը ապահովուած է: Հարցին, թէ իսկ ինչպէ՞ս են վերաբերւում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան պատգամաւորների կողմից հնչեցուած սուր քննադատութեանը, արդեօ՞ք ՀՀԿ-ին չի վրդովուեցրել նախկին կոալիցիոն գործընկերոջ կեցուածքը, որը խորհրդարանի ամբիոնից չի յայտարարել ընդդիմադիր լինելու մասին, Շարմազանովը պատասխանեց. - «Վրդովմունքը քաղաքական կատեգորիա չէ: Շատ հանգիստ եւ թեթեւ, սովորական ենք վերաբերւում»:

## ԴԱՏԱԽԱԶՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿԱՐՃԵԼ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ԳՈՐԾԸ

Գլխաւոր դատախազութիւնը մերժել է կարճել Ազգային անվտանգութեան ծառայութիւնում (ԱԱԾ) «Սիվիլիթաս» հիմնադրամին եւ նրա հիմնադիր Վարդան Օսկանեանին առնչուող փողերի լուացման յատկանիշներով յարուցուած քրէական գործը: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրեց գլխաւոր դատախազի մամուլի խօսնակ Սոնա Տռուզեանը:

«Բողոքը ուսումնասիրուել է գլխաւոր դատախազութեան ազգային անվտանգութեան մարմիններում քննուող եւ կիբերյանցագործութիւնների գործերով վարչութեան պետի տեղակալի կողմից: Քննարկելով բողոքում մատնանշուած հանգամանքները՝ հանգել են այն եզրակացութեան, որ այն ենթակայ է մերժման, ուստի եւ կայացուել է բողոքը մերժելու մասին որոշում, որի օրինակը ուղարկուել է [Օսկանեանի] փաստաբանին», - ասաց Տռուզեանը:

Գլխաւոր դատախազի մամուլի խօսնակը չմանրամասնեց, թէ ինչ պատճառաբանութեամբ է բողոքը մերժուել, ասաց՝ անհրաժեշտութեան դէպքում դիմումատուն կարող է հրապարակել մերժման հիմքերը: Իսկ դիմումատուն՝ Վարդան Օսկանեանի փաստաբան Տիգրան Աթանէսեանը, դեռ չի ստացել դատախազութեան՝ ուղարկած պատասխանը: Չնայած դրան Աթանէսեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրել էր, որ եթէ գործը չկարճուի, այդ որոշումը կը բողոքարկեն դատարանում:

Յիշեցնենք, ԱԱԾ-ն պնդում է, որ «Սիվիլիթաս» հիմնադրամը թաքցրել է հարկերը. Օսկանեանի եւ նոյն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Տիգրան Կարապետեանի անուններով բացուած հաշուեհամարներին փոխանցուել է 1 միլիոն 135 հազար դոլար, որը, ըստ ԱԱԾ-ի՝ «խնդրայարոյց գումար է»:

ԱԱԾ-ում քննուող գործում Օսկանեանը իբրեւ վկայ է ներգրաւուած, սակայն թէ Օսկանեանը, թէ նրա փաստաբանը, յղում կատարելով ԱԱԾ-ի յայտարարութեանը, ասում են, որ ԱԱԾ-ն նախկին արտգործնախարարին ոչ թէ որպէս վկայ, այլ որպէս կասկածեալ դիտում: Այդ պատճառով Օսկանեանը արդէն երկրորդ անգամ հրաժարւում է ցուցմունք տալ եւ պնդում է, որ տեղի ունեցողի տողատակում քաղաքական պատուէր կայ, քանի որ ինքն ու «Սիվիլիթաս»-ը չեն կարող կապ ունենալ փողերի լուացման հետ:

## «ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆԸ ԴԺՈՒԱՐ ԿԸ ԼԻՆԻ ԱՄԷՆ ԱՆԳԱՄ ՕՐԻՆԱԳԾԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ»

Հայաստանի կառավարութեան նոր ծրագրի վրայ հեղինակները մեծ ջանքեր չեն թափել, հակառակ դէպքում այն կը լինէր առաւել մանրամասն եւ սպեցիֆիկ, ճիշդ գնահատուած կը լինէին ցաւոտ կէտերը, որոնք եղել են կառավարութեան գործունէութեան մէջ: Այս մասին, Յունիսի 25-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց «Առաւօտ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արամ Աբրահամեանը: «Այսօր խօսքը նոյն վարչապետի եւ նոյն կառավարութեան մասին է, որը, մեղմ ասած, լաւ չդրսեւորեց իրեն նախորդ շրջանում: Բնական է, որ յաջորդ հինգ տարուայ ծրագիրը գրելիս՝ ակնկալելու էինք, որ կը լինի վերլուծութիւն, թէ ինչո՞ւ նախորդ ծրագիրը չի կատարուել: Պարզապէս ասել՝ տնտեսական ճգնաժամ է, քիչ է, որովհետեւ միշտ ճգնաժամ է լինելու»,- ասաց նա:

Նրա խօսքով՝ ծրագիրն արդարացիօրէնք է քննադատուել նաեւ ԱԺ-ում: Այս առումով խմբագիրը դրական է համարում խորհրդարանում ուժերի յարաբերակցութիւնը, քանի որ իշխող կուսակցութեանը դժուար կը լինի ամէն անգամ օրինագծերն անցկացնել: «Կարծում էք ամէն անգամ կը յաջողուի օլիգարխներին, գործարարներին քաբաբնոցներից բերել խորհրդարան, որպէսզի նրանք քուէարկե՞ն: Չեն կարողանայ, երբեմն դա կը լինի դժուար: Իսկ յետոյ արդէն գեներալները կը նստեն իրենց օբիեկտներում ու այսպէս ասած «պեռերիւ» կ՚անեն»,- իր կարծիքն արտայայտեց Ա. Աբրահամեանը:

Անդրադառնալով 2013թ փետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններին՝ «Առաւօտի» խմբագիրը կարծիք յայտնեց, որ կ՚առաջադրուեն Պարոյր Հայրիկեանը, Արամ Կարապետեանը, ԲՀԿ-ից Վարդան Օսկանեանը, իսկ ՀԱԿ-ից՝ Հրանդ Բագրատեանը:

## «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԴԷՄ ԷՐ ԾՐԱԳՐԻՆ, ՈՉ ԹԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ».- ՌՈՒԲԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանն լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ ՀՀ կառավարութեան հնգամեայ գործունէութեան ծրագիրը բաւականին լուրջ է եւ համակողմանի քննարկման արժանացաւ եւ որ ծրագրի շուրջ քննարկումն, իրօք, յարիր էր խորհրդարանին:

«ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութիւնը դէմ քուէարկեց, բայց դէմ էր ծրագրին, ոչ թէ կառավարութեանը: Ընդհանրապէս, ծրագիր ներկայացնելիս պէտք է հաշուի առնուի երեք կէտ՝ թէ ինչքանո՞վ է իրատեսական, արդեօ՞ք, առկայ են այն մեխանիզմները, որոնց միջոցով պէտք է իրականացուի եւ ինչքանո՞վ է պետութիւնը կենսական տարածք ստեղծում դրանց իրականացման համար»,- ասաց նա:

«Մեր դիտարկումն այն էր, որ այս կէտերից ոչ մէկին ամբողջական պատասխան չի տալիս ծրագիրը»,- նշեց նա եւ աւելացրեց, որ քուէարկել են հետեւեալ գիտակցմամբ. «Մեր դիմաց յանուն պետականութեանն էր, ոչ թէ՝ ընդդէմ իշխանութեանը»:

Ըստ Ռուբէն Յակոբեանի՝ 20 տարիների ընթացքում բոլոր կառավարութիւնները կարողացել են ստեղծել մնայուն մի բան, ինչը կոռուպցիոն համակարգն է, ու քանի դեռ դրա դէմն առնել չի լինում, խօսել որեւէ ծրագրի մասին, ինչը կը նպաստի պետութեան զարգացմանը՝ աւելորդ է:

# ԼՈՒՐԵՐ

## ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ը ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան Ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) եզրափակիչ զեկոյցը կրկին փաստում է, որ Մայիսի 6-ի Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններն անցկացուել են բարեփոխուած օրէնսդրութեամբ, աչքի են ընկել մրցունակ, աշխոյժ եւ առաւելապէս խաղաղ քարոզարշաւով, միեւնոյն ժամանակ՝ ընտրական ողջ գործընթացի նկատմամբ վստահութեան ցածր աստիճանով:

Զեկոյցում միջազգային ամենամեծ դիտորդական առաքելութիւնը ներկայացնում է կոնկրետ դէպքեր ու փաստեր: Մասնաւորապէս, նշւում է Հանրապետականի կողմից ուսուցիչներին ու աշակերտներին նախընտրական քարոզչութեան մէջ ներգրաւելու մասին, ինչպէս նաեւ արձանագրւում է, որ ,Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը եւ այդ կուսակցութեան ներկայացուցիչներից մէկը խախտել է Ընտրական օրէնսգրքի այն դրոյթը, որն արգելում է մրցակիցներին եւ նրանց հետ առնչութիւն ունեցող բարեգործական կազմակերպութիւններին նուէրներ կամ ծառայութիւններ մատուցել ընտրողներին:

«Թէեւ Մայիսի 6-ի ընտրութիւնների կազմակերպումը անցկացուել է պրոֆեսիոնալ եւ թափանցիկ ձեւով, քուէարկութեան օրը եղել է առաւելապէս խաղաղ եւ հանգիստ, քուէարկութիւնը՝ կանոնակարգուած եւ լաւ կազմակերպուած ընտրատեղամասերի գերակշիռ մասում, այդուամենայնիւ, միջազգային դիտորդները քուէարկութիւնը բացասական են գնահատել դիտարկուած տեղամասերի 9 տոկոսում, որը զգալի թիւ է», - փաստում է զեկոյցը:

Միջազգային դիտորդները, մասնաւորապէս, հաղորդել են մի շարք լուրջ խախտումների մասին. դիտարկուած ընտրատեղամասերի 11 տոկոսում արձանագրուել են խմբակային քուէարկութեան դէպքեր, 4 տոկոսում՝ վստահուած անձանց քուէարկութեան դէպքեր, 7 տոկոսում քուէատուփերը պատշաճ կերպով փակուած չեն եղել, 12 տոկոսում չի երաշխաւորուել քուէարկութեան գաղտնիութիւնը:

Անդրադառնալով քուէաթերթիկների հաշուարկին? դիտորդները նշում են, որ այդ գործընթացը հիմնականում իրականացուել է օրէնսդրական չափանիշներին համապատասխան, այդուամենայնիւ դիտարկուած 125 ընտրատեղամասերից 24-ում, կամ իւրաքանչիւր հինգ տեղամասերից մէկում, գործընթացը բացասական գնահատական է ստացել՝ հիմնականում տեխնիկական խնդիրների պատճառով: Լուրջ խախտումները, ըստ դիտորդների, եզակի բնոյթ են կրել, մասնաւորապէս, արձանագրութիւնների կեղծման 5 դէպք է արձանագրուել:

Զեկոյցը փաստում է, որ ընտրութիւնների նախապատրաստական շրջանում կուսակցութիւնների մեծ մասը, բացառութեամբ Հանրապետականի, մտահոգութիւն են յայտնել ընտրացուցակների որակի վերաբերեալ՝ պնդելով, թէ ուռճացուած թուերը, ցուցակներում առկայ մահացած անձանց անունները, ինչպէս նաեւ նոյն հասցէում գրանցուած մեծաքանակ ընտրողների առկայութիւնը կարող են օգտագործուել քուէարկութեան օրը մանիպուլյացիաներ իրականացնելու համար:

## ԱՒՍՏՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ. «ԵՍ ԴԵՌ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՄ ԿԱՐԴԱՑԵԼ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ԳԻՐՔԸ»



Աւստրիայի նախագահ Հայնց Ֆիշերի եւ Սերժ Սարգսեանի մամլոյ ասուլիսը Երեւանի մէջ

Աւստրիայի նախագահ Հայնց Ֆիշերի ակնկալիքները Հայաստան այցից լիովին արդարացան: Այդ մասին նա յայտարարել է Յունիսի 26-ին Երեւանում՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ համատեղ ասուլիսում:

Նրա խօսքով, Հայաստանի նկատմամբ հետաքրքրութիւնը վաղուց է ծագել, եւ դեռ դպրոցում նա կարդացել է Ֆրանց Վերֆելի յայտնի ստեղծագործութիւնը («Մուսա լեռան 40 օրը»-խմբ.): Ուսանողական տարիներին ծանօթացել է Հայաստանի պատմութեանը, ասել է Աւստրիայի նախագահը՝ ընդգծելով Անաստաս Միկոեանի դերը ԽՍՀՄ կառավարութիւնում: «Գրքերով ես ծանօթ եմ Հայաստանի բնապատկերին»,- ասել է Ֆիշերը:

Նշելով, որ այցից իր ակնկալիքները լիովին արդարացան, Աւստրիայի նախագահը նշել է, թէ ուրախ կը լինի վաղը ծանօթանալ Հայաստանի մշակութային ժառանգութեան հետ: «Աւստրիայում լաւ դահուկորդներ կան, իսկ Հայաստանում՝ լաւ շախմատիստներ»,- նկատել է Ֆիշերը:

Աւստրիայի նախագահի հետ համատեղ ասուլիսի ընթացքում Սերժ Սարգսեանը ասաց թէ, իրավիճակը ղարաբաղեան հակամարտութեան շուրջ շարունակում է մարտահրաւէր լինել ինչպէս տարածաշրջանի, այնպէս էլ Եւրոպայի համար:

«Մենք չենք տեսնում ղարաբաղեան հակամարտութեան լուծման այլընտրանք, բացի խաղաղ կարգաւորումից՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում»,- ընդգծել է Հայաստանի նախագահը, յաւելելով, որ, ցաւօք, Ադրբեջանի քաղաքականութիւնը, վերջին շրջանում ռազմատենչ յայտարարութիւնները եւ անհիմն ինքնավստահութիւնը լարուածութիւն են ստեղծում ինչպէս Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի ԶՈՒ շփման գծում, այնպէս էլ հայ-ադրբեջանական սահմանին: Եւ պատահական չէ, որ վերջին մի քանի շաբաթուայ ընթացքում սադրանքների արդիւնքում զոհուել են երիտասարդներ, իսկ իրավիճակը լարուել է»,- ասել է Սերժ Սարգսեանը:

## ՏՈՒՐԻԶՄԻ ԾԱՒԱԼՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԻՋՈՒՄ Է ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻՆ

Արտերկրից ժամանող զբօսաշրջիկների թուաքանակով Հայաստանը զիջում է իր հարեւաններից առնուազն երեքին՝ Թուրքիային, Վրաստանին եւ Ադրբեջանին:

ՄԱԿ-ի կազմում գործող Զբօսաշրջութեան համաշխարհային կազմակերպութիւնը հրապարակել է հերթական տարեկան զեկոյցը, որի համաձայն, 2011-ի Հոկտեմբերի տուեալներով՝ Հայաստանը մէկ տարուայ ընթացքում ընդունել է 758 հազար զբօսաշրջիկ, ինչը մօտ 11 տոկոսով աւելի է, քան 2010-ին:

2011 թուականին Ադրբեջան է այցելել շուրջ 1 միլիոն 500 հազար զբօսաշրջիկ՝ նախորդ տարուայ 1 միլիոն 280 հազարի դիմաց:

Տուրիզմի ոլորտում Հարաւային Կովկասի միանձնեայ առաջատարը, սակայն, վրացիներն են. ՄԱԿ-ի տուեալներով՝ մէկ տարում Վրաստան է այցելել 2 միլիոն 800 հազար զբօսաշրջիկ:

Եթէ Հարաւային Կովկասում Վրաստանը առաջատարն է զբօսաշրջիկների թուաքանակով, ապա համաշխարհային կտրուածքով Հայաստանի հիւսիսային հարեւանները առաջատար են զբօսաշրջութեան ծաւալների աճի ցուցանիշով՝ մէկ տարուայ ընթացքում Վրաստան ժամանող զբօսաշրջիկների թիւն աւելացել է 39 տոկոսով:

Ի դէպ, Թուրքիայի 2011 թուականի ցուցանիշները, ըստ ՄԱԿ-ի մասնագէտների, բաւական տպաւորիչ են: Ստամբուլը, ինչպէս նաեւ Թուրքական ծովափնեայ հանգստավայրերը աւելի քան 29 միլիոն զբօսաշրջիկների այցելութիւն են ապահովել: «Երկիր ժամանած օտարերկրեայ տուրիստների քանակով Թուրքիան աշխարհում վեցերորդ տեղում է», - նշում են զեկոյցի հեղինակները:

ՄԱԿ-ի մասնագէտները նաեւ ուսումնասիրել են, թէ ինչ ազդեցութիւն են թողնում զբօսաշրջիկները այս կամ այն պետութեան տնտեսութեան վրայ:

Այս առումով մեր տարածաշրջանի միանձնեայ առաջատարը Թուրքիան է՝ 2010-2011 թուականներին զբօսաշրջիկները այդ երկրում ընդհանուր առմամբ ծախսել են 23 միլիարդ ամերիկեան դոլար: Դիտարկուած ժամանակաշրջանում Ադրբեջան ժամանած զբօսաշրջիկները ծախսել են շուրջ 1 միլիարդ 200 միլիոն, իսկ Վրաստանում՝ 900 միլիոն ամերիկեան դոլարից քիչ աւելին:

Զբօսաշրջիկներից ստացուած եկամուտների առումով եւս Հայաստանը Հարաւային Կովկասի յետնապահն է. ՄԱԿ-ի տուեալներով՝ մէկ տարում Հայաստան ժամանած տուրիստները մօտ 445 միլիոն դոլար են ծախսել երկրում, ինչը ընդամէնը 37 միլիոնով է աւելի 2010-ին արձանագրուած ցուցանիշից:

## ՄՃԽ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԶԵԿՈՅՑԸ

Շարունակուած էջ 1-էն

առաջ, որոնք հաւանաբար մրցակցային պիտի ըլլան»,- նշուած է զեկոյցին մէջ:

Փաստաթուղթին մէջ կը նշուի, որ 2008 թուականին յետընտրական բռնութիւններուն յաջորդած քաղաքական ճգնաժամը, ինչպէս նաեւ համաշխարհային տնտեսական ճգնաժամը ցնցած են Հայաստանը:

«Քաղաքական ոչ բաւարար կամքը եւ խոշոր գործարարներու դիմադրութիւնը խլացուցած է արդէն իսկ ուշացած այն երկչոտ բարեփոխումները, որ իշխանութիւնները սկսած էին: Արդիւնքով՝ տնտեսութիւնը կը շարունակէ թոյլ եւ քիչ այլազան եւ դրսի դրամական փոխանցումներէն վտանգաւոր կախուածութեան մէջ մնալ»,- կը նշուի զեկոյցին մէջ:

ՄԽԺ զեկոյցը այնուհետեւ կը նշուի, որ բարձր մակարդակով կաշառակերութեան եւ փտածութեան դէմ պայքարի քանի մը լուրջ փորձեր եղած են, սակայն գործադիր իշխանութիւնը փաստացի կը շարունակէ մնալ անվերահսկելի:

«Դատական համակարգը անկախ չէ եւ բաղկացուցիչ չէ. դատախազութիւնը կը վերահսկէ դատական գործընթացը, եւ իշխանութիւններուն հաշուետու դարձնելու մեքանիզմները մեծ հաշիւով անարդիւնաւէտ են»,- կը նշեն զեկոյցին հեղինակները:

Զեկոյցը կ՛անդրադառնայ նաեւ Հայստանի մէջ մամուլի շուրջ տիրող իրադրութեան՝ նշելով, որ լրատուամիջոցներու ազատութիւնը բաւարար չէ:

«Թէեւ լրագրողներուն եւ լրատուամիջոցներուն դէմ անօրինական գործողութիւններուն թիւը նուազած է, սակայն հեռուստատեսութեան ոլորտին մէջ տակաւին կարծիքներու բազմազանութեան ընդգծուած պակաս կայ, մինչդեռ հեռուստատեսութիւնը կը շարունակէ մնալ հայաստանցիներու գերակշիռ մեծամասնութեան տեղեկատուութեան աղբիւրը»,- նշուած է փաստաթուղթին մէջ:

«Նախագահ Սարգսեան եւ անոր կառավարութիւնը կը գիտակցին ամենահրատապ խնդիրներէն շատերուն, սակայն բազմաթիւ բարեփոխումները ընդամէնը թուղթի վրայ են կամ ենթադրաբար անոնք մշակուած են այնպէս, որ կիրարկման մեքանիզմները անարդիւնաւէտ ըլլան: Բարեփոխումներու նկատմամբ զգուշաւոր, զարգացման հետամուտ մօտեցումը լաւագոյն պարագային երերուն կայունութիւն կ՛ապահովէ»,- կ՛ըսուի զեկոյցին մէջ:

Այնուհետեւ ՄԽՎ զեկոյցին հեղինակները կը գրեն, որ Հայաստանի Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւններու համաձայնութեան փլուզումը եւ նոր, աւելի մրցակցային խորհրդարանի ձեւաւորումը վարչակազմին համար կրնայ բարեփոխումները իրականացնելու անհրաժեշտ խթան հանդիսանալ:

«Սակայն փոփոխութիւններու ճանապարհին կաղալը Հայաստանի համար կը նշանակէ չամրացնել Հայաստանի ուժը»:

# ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*Յարութիւն Սամուէլեան, նախկին նախարար Աբրահամ Տէտէեան, ՍԴՀ Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ ընկեր Ալեքսան Քէօշկերեան եւ ընկերներ, Կուսակցութեան Կիպրոսի Շրջանի ատենապետ ընկ Աւետիս Փօշողլեան, հայ քաղաքական կուսակցութեանց, մարմնամարզական, բարեսիրական, մշակութային միութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ, մտաւորականներ, տնօրէններ, հոգեւորականներ, ազգային դէմքեր, Պէյրութի եւ Սին Էլ Ֆիլ-ի քաղաքապետութեանց անդամներ՝ Արամ Մալեան, Աւօ Երեմեան:*



*Հանդիսութիւնը սկսաւ ՀՄՄ-ի փողերախումբին՝ Լիբանանի, Հայաստանի եւ Մայր Կուսակցութեան քայլերգներու կատարողութեամբ, որմէ ետք տաղանդաւոր ասմունքող ընկերուհի Անի Եփրեմեան բանաստեղծութիւններով համադրուած իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգելու Հնչակեան Կուսակցութեան դրօշին ծառայած նահատակներուն յիշատակը: Ան ըսաւ. «Հայ ազգային ազատագրական պայքարի պատմութիւնը ոսկէ տառերով արձանագրած է 1887 թուականը՝ Հնչակեան Կուսակցութեան ծնունդը: Մայր Կուսակցութիւնը իր գործունէութիւնը տարածեց ամէնուրեք, եղաւ հեռատես, խիզախ եւ մնաց յանձնառու իր ուխտին: Անոր գործունէութիւնը հատած հանգրուաններն պատուաբեր ու պանծալի յաղթանակներու շարանը հպարտութեան զգացումով կը լեցնեն մէն մի հայորդիի կուրծքը: Հնչակեան Կուսակցութիւնը այսօր իր ամբողջ կորովն ու հնարաւորութիւնները ի գործ կը դնէ հայապահպանման, Հայոց դէմ կատարուած Ցեղասպանութեան ճանաչման, հողային եւ մնացեալ հատուցումներու պահանջին եւ անկախ պետականութեան ամրապնդման ի խնդիր«:*

*Օրուան առաջին բանախօսն էր ՍԴՀ Կուսակցութեան Կիպրոսի Շրջանի ատենապետ, մտաւորական, խմբագիր եւ կրթական մշակ ընկեր Աւետիս Փօշողլեան: Յարգելի բանախօսը յայտնեց, թէ Հնչակեան Կուսակցութեան 125 տարեկան ըլլալու փաստը զայն կը պարտաւորեցնէ ներկայանալ պատմութեան եւ ժողովուրդին դատաստանին առջեւ: Ան նշեց, թէ 125 տարիներու վրայ տարածուող Հնչակեան Կուսակցութեան գոյութեան պատճառը խարսխուած է երկու հիմնական արժէքներու վրայ՝ պայքար ազգային ազատագրութեան եւ ընկերային արդարութեան համար: «Ազատագրական պայքարը Հնչակեան Կուսակցութեան միջոցաւ ստացաւ ծաւալ. Փոքր Հայքի զինեալ խմբակներէն մինչեւ Սասնոյ ապստամբութիւն, Պապը Ալիի ցոյցէն մինչեւ Զէյթունի ապստամբութիւն ու Վանի ինքնապաշտպանութիւն կազմեցին դափնիները մեր պայքարի ոսկէ շղթային: Գալով գաղափարախօսութեան, ընկերվարական դաւանանքը եղաւ դասակարգային պայքարի մեր զէնքը: Ընկերվարութեան բացակայութեան՝ մարդը մարդու նկատմամբ առաւել եւս կը դառնայ գազան» ըսաւ ան: Բանախօս ընկերը դիտել տուաւ, որ Հնչակեան Կուսակցութեան ներկան տարբեր է իր երէկէն, ընդգծելով հանդերձ, թէ պայմանները փոխուած են այսօր, ան շեշտեց, թէ Հնչակեան Կուսակցութիւնը ինքնանպատակ չէ, այլ՝ միջոց ազգին ու հայրենիքին ծառայութեան»:*



*Բանախօս ընկերը իր խօսքը փակեց մաղթելով, որ Հնչակեան Կուսակցութիւնը իր տարեդարձները նշէ ազատագրուած Վանի մէջ, անմահն Փարամազի արձանին առջեւ՝ Արարատի փէշերուն:*

*Շնորհալի ասմունքող ընկ. Անի Եփրեմեան դարձեալ ներկաները հմայեց հայ բանաստեղծութեան նմոյշներով: Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Արեգ» պարախումբի պարման-պարմանուհիները երեք տպաւորիչ պարերով առաւել ոգեւորեցին ներկաները:*

*Օրուան երկրորդ բանախօսը, ՍԴՀ Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի ատենապետ ընկեր Ալեքսան Քէօշկերեան, նախ՝ իր երախտագիտութիւնը յայտնեց կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Գերաշնորհ Սրբազան հօր՝ սոյն հանդիսութեան հովանաւորութիւնը եւ նախագահութիւնը ստանձնելուն համար: Ընկեր Քէօշկերեան նշեց, թէ մեր ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ չկայ հանգրուան, որուն մէջ դերակատարութիւն ունեցած չըլլար Հնչակեան Կուսակցութիւնը: Ան ծանրացաւ պատմական որոշ հանգրուաններու նախօրէին կուսակցութեան ղեկավարութեան հեռատես քաղաքականութեան, պատմական կարեւոր իրադարձութիւններու ընթացքին կուսակցութեան դերակատարութեան, ինչպէս՝ Սարդարապատի պատերազմը, ներգաղթը: Ընկեր Ալեքսան Քէօշկերեան յատկապէս կեդրոնացաւ կուսակցութեան լիբանանեան եւ ազգային քաղաքականութեան վրայ: Ան շեշտեց, թէ Հնչակեան Կուսակցութիւնը առաջին իսկ օրէն դիրքորոշուած է ի նպաստ կարիքաւորին, եղած է ընկերային արդարութեան պաշտպանութեան առաջին գիծերու վրայ, պայքարած է Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան եւ ժողովրդավարութեան համար: Ան այսօր ալ կ’առաջնորդուի միեւնոյն համոզումներով, կ’ողջունէ հարցերը երկխօսութեան ճամբով լուծելու քայլերը: Ազգային իրականութեան մէջ՝ Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ միասնականութեան եւ Լիբանանահայութեան անվտանգութիւնը կը դասէ ամէն բանէ վեր: Ներլիբանանեան գետնի վրայ, քաղաքական որեւէ զարգացումի պարագային, կուսակցութիւնը կը մնայ կառչած լիբանանահայութեան դրական չէզոքութիւն պահելու իր համոզումներուն վրայ:*

*Հայրենի սիրուած երգիչ Սմբատ Խալաթեան եւ իր նուագախումբը մատուցեցին ազգային հայրենասիրական երգերու փունջ մը: Մեծապէս գնահատուեցաւ հայրենի երգիչ եւ երաժիշտ Սմբատ Խալաթեանի ՍԴՀԿ-ի հիմնադրութեան նուիրուած երգին ունկնդրութիւնը: Հաճելի անակնկալ մըն էր փոքրիկներու մասնակցութեամբ երգիչ Յարութ Մուրատեանի «Հայոց Բանակ»-ին կատարումը:*

*Հանդիսութեան պաշտօնական մասին փակման խօսքը արտասանեց Լիբանանի Բարեջան Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Առաջնորդ սրբազանը ողջունեց հայ ազգային ազատագրական պայքարի ռահվիրայ Հնչակեան Կուսակցութիւնը, շեշտելով, որ անոր ծնունդը նոր էջ բացաւ մեր ժողովուրդի պատմութեան մէջ եւ հետագային Մայր Կուսակցութեան շարժումին հետեւեցան հայ քաղաքական տարբեր կուսակցութիւններ: Անոնք՝ Հնչակեան Կուսակցութեան նման նոյնպէս ծառայեցին ու կը շարունակեն ծառայել հայ ժողովուրդին: Գեղամ Սրբազան մաղթեց, որ Հնչակեան Կուսակցութիւնը մնայ իր արմատներուն հարազատ, այնպէս ինչպէս՝ պէտք է ըլլան մնացեալ կազմակերպութիւնները: Ան շեշտեց, թէ Հնչակեան Կուսակցութեան սկսած ոգիին եւ մնացեալ քաղաքական կուսակցութիւններուն պայքարին շնորհիւ կերտուեցաւ անկախ Հայաստանը: Ան մաղթեց, որ հայ քաղաքական բոլոր կուսակցութիւնները մնան ազգային ոգիի զտարան:*

*Շքեղ եւ տպաւորիչ հանդիսութիւնը իր խանդավառութեան գագաթնակէտին հասցուց հայրենի տաղանդաւոր երգիչ Սմբատ Խալաթեանն ու իր նուագախումբը, որոնք իրենց կատարողական արուեստով համակեցին հանդիսականները ազգային, յեղափոխական եւ գաղափարական շունչով:*



# ՀԱՅԱՏԵԱՑՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵԼ Է «ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ»

*«Հայատեացութիւնը երկար տարիների ընթացքում դարձել է Թուրքական ինքնութեան անբաժան եւ առանցքային բաղադրիչներից մէկը՝ թէ՛ պետական մակարդակում եւ թէ՛ հանրային շրջանակներում», - պնդում են Ստամբուլում գործող Սոցիալական եւ տնտեսական հետազօտութիւնների հիմնադրամի՝ TESEV-ի մասնագէտները:*

*«Լսելով Թուրքիայի հայերին», - այսպէս է կոչւում հիմնադրամի պատրաստած 130 էջանոց զեկոյցը, որը թերեւս առաջին փորձն է վերջին մի քանի տարիների ընթացքում՝ ի մի բերել եւ հասկանալ այն բոլոր խնդիրները, որ ծառացել են Թուրքիայի հայազգի քաղաքացիների առջեւ:*

*Զեկոյցը պատրաստուած է Թուրքահայ համայնքի մօտ երկու տասնեակ ներկայացուցիչների հետ արուած հարցազրոյցների հիման վրայ: Հարցուածները ոչ միայն հայաշատ Ստամբուլից են, այլեւ Արեւելեան Անատոլիայից եւ Կիլիկիայում մնացած միակ հայկական գիւղից՝ Վաքըֆլըից:*

*«Թուրքերի մի զգալի մասը մեզ չի կարող իրենց հաւասար համարել՝ ընդունելով հայերին միայն որպէս փոքրամասնութիւն», - նշել է հարցուածներից մէկը:*

*Զեկոյցի հեղինակները արձանագրում են, որ հայերի նկատմամբ խտրականութեան հիմքում ոչ միայն պատմական անցեալն է, այլեւ կրօնական տարբերութիւնները: Այս պարագայում, ըստ TESEV-ի վերլուծաբանների, հայերին չի օգնում անգամ կրօնափոխութիւնը: Իսլամ ընդունած հայկական ընտանիքներից մէկի անդամները զեկոյցի հեղինակներին պատմել են. - «Անգամ կրօնափոխութիւնից յետոյ [Թուրքերը] թոյլ չեն տալիս մեզ մոռանալ մեր հայկական ծագման մասին: Ողջ կեանքիդ ընթացքում քեզ անընդհատ ումբահարում են, ասելով՝ «կրօնափոխ եղիր, եւ կեանքդ աւելի դիւրին կը դառնայ», դու ի վերջոյ գնում ես այդ քայլին, սակայն որեւէ բան չի փոխւում. քեզ սկսում են անուանել «donme», այսինքն՝ կրօնափոխ եղած»:*

*Զեկոյցի հեղինակները նաեւ նկատում են. - «Թուրքերի շրջանում անցկացուած մի հարցման համաձայն՝ երկրի բնակիչների 30 տոկոսը համոզուած է, որ հայերը Թուրքիայում յայտնուել են Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ միայն, եւս 30 տոկոսն էլ ընդհանրապէս գաղափար չունի, թէ հայերն ինչպէս են դարձել Թուրքիայի բնակիչներ: Եթէ հաշուի առնենք, որ Անատոլիայում հայկական ներկայութիւնն առնուազն մ.թ.ա. 6-րդ դարում է սկիզբ առել, ապա այդ 60 տոկոսի անտեղեակութեան պատճառներն աւելի հասկանալի են դառնում»:*

*Սոցիալական եւ տնտեսական հետազօտութիւնների Թուրքական հիմնադրամի մասնագէտները նաեւ արձանագրում են, որ Թուրքական պետական համակարգն անում է ամէն ինչ հայերի մուտքը կառավարական կառոյցներ կանխելու համար: Յայտնի են դէպքեր, երբ հայ ուսանողների քննական գնահատականները արհեստականօրէն իջեցուել են՝ նրանց պետական թափուր պաշտօնների համար անցկացուող մրցոյթներից հեռու պահելու համար:*

*Այս բոլոր քայլերը, ի վերջոյ, հայերի շրջանում պաշտպանական հակազդեցութիւն են առաջ բերում:*

*«Թուրքահայութեան շրջանում առաւել զգալի եւ մեծ տարածում գտած քայլերից մէկը հանրային շփումների ընթացքում ի ծնէ տրուած հայկական անուան փոխարէն Թուրքական անունով ներկայանալն է: Շատերն իրենց երեխաների անուանակոչութեան ժամանակ առաջնորդւում են մի սկզբունքով, որ տուեալ անունը առկայ լինի թէ՛ Թուրքական եւ թէ՛ հայկական մշակոյթներում», - գրում են հիմնադրամի մասնագէտները:*

*Ընդհանուր առմամբ, TESEV-ի վերլուծաբանների համոզմամբ, հայկական ծագմամբ Թուրքիայում ապրելը լի է ամենօրեայ հակասութիւններով:*

*«Մենք միաժամանակ պէտք է ապացուցենք, որ մեզ կոտորել են, դրան զուգահեռ ապացուցելով, որ դեռ ողջ ենք», - նշել է հարցուած Թուրքահայերից մէկը:*

*Զեկոյցի հեղինակները հանդէս են գալիս նաեւ յստակ խորհուրդներով՝ նշելով քայլերի մի շարք, որոնք հնարաւորութիւն կը տան գոնէ փոքր-ինչ մեղմել փոքրամասնութիւնների վիճակը:*

*«Հայերի եւ միւս փոքրամասնութիւնների դէմ կիրառուող խտրականութեան հիմնական աղբիւրը երկրի Սահմանադրութիւնն է, ուստի նորացուած հիմնական օրէնքը պէտք է յստակ դրոյթներ սահմանի, որոնք թոյլ կը տան մշակութային տարբեր խմբերին գոյատեւել երկրի տարածքում, - նշում են TESEV-ի մասնագէտները: Բացի այդ, նրանց կարծիքով, դատական համակարգը չպէտք է սահմանափակուի բացառապէս «Թուրքական ինքնութեան ոտնահարման» յօդուածներով քրէական գործեր յարուցելով. - «Հարկաւոր է պատժել նաեւ այլ ինքնութիւնների դէմ ուղղուած ելոյթների համար»:*

*Միւս քայլը, որ կարող է օգնել փոքրամասնութիւնների խնդիրների լուծմանը, Թուրքական խորհրդարանում կրօնական փոքրամասնութիւնների, մասնաւորաբար՝ հայերի, ներկայացուցիչների ընդգրկումն է: TESEV-ի մասնագէտները, սակայն, արձանագրում են, որ Թուրքահայ համայնքում այս խնդրի շուրջ որոշակի տարաձայնութիւններ են առկայ. - «Թուրքահայերի մի մասը կարծում է, որ հայ պատգամաւորը միայնակ ի վիճակի չի լինի որեւէ խնդիր լուծել: Ոմանք էլ, հակառակը, նշում են, որ դա իւրատեսակ խորհրդանշական քայլ կը լինի՝ ցոյց տալով, որ փոքրամասնութիւնները, մասնաւորաբար՝ հայերը, Թուրքական հանրութեան օրինական մասնիկն են»:*

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐ

### ԱԼԲԵՐՏ ԳՐՔԱՇԱՐԵԱՆ

Քսան հսկայ դիւցազնական
Ժայռեր անշարժ ու աներեր
որոնք եղան ազատութեան
Հրեղէն սիւները երկնաքեր:

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալներին մեր հնչակեան:

Ահա նրանք, քսան անմահ
Փարամազներ գաղափարի
Որոնց համար չեղաւ ոչ ահ
Եւ ոչ էլ մահ սարսափելի
Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալների մեր հնչակեան:

Ու միշտ եղան հերոսական
Ահեղ մուրճեր ու բազուկներ
Փշրելու միշտ լուծի շղթան
Ստրուկների մերկ ու անտէր

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալների մեր հնչակեան:

Քսան սիւներ կախաղանի
Որոնք ընդհուպ շեմին մահուան
Սրսափեցրին սուլթանների
Պալատները կարմիր արեան

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալների մեր հնչակեան:

Եւ մենք այսօր ձեր բոլորի
Ճակատներին մասեաց գագաթ
Պիտ դրոշմենք մեր սրտերի
համբոյրները երախտապարտ
Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալների մեր հնչակեան:

Ու մենք նոյնպէս պիտի լինենք
Ուխտեալները նուիրական
դրօշակին Ս.Դ.Հ.Կ.
Եւ կոչումին վեհ հնչակեան

Փառք ու պատիւ յաւերժական
Ուխտեալների մեր հնչակեան:




ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Միջոցառումներ նուիրուած
Ս.Դ.Հ.Կ.-ի 125 ամեակին

Սեպտեմբեր 16, 2012
Հայաստանի Անկախութեան Փառատօն
Սեպտեմբեր 22, 2012
Ազգային Երգերու Երեկոյ
Հոկտեմբեր 27, 2012
Միօրեայ Գիտաժողով
Նոյեմբեր 18, 2012
125 Ամեակի Եզրափակիչ Հանդիսութիւն

ARMENIAN COUNCIL OF AMERICA

## Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ

# ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ – Ս. ՎԱՀԱԳՆ –




***ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԵՃԵԱՆ***
***(Շարունակուած նախորդ թիւէն)***

*Ս. Վահան կը նշանակուի պարենափոխադրման ընդհանուր ղեկավար: Արարատեան գունդին հետ կը հասնի Վանի պաշարուած հայութեան օգնութեան: Վանի մէջ Ս. Վահագն կ'իջեւանի իր գաղափարակից, Վանի ինքնապաշտպանութեան գերագոյն խորհուրդի անդամ Հրանդ Գալիկեանի տունը: Կը միանայ Վարդանի գլխաւորած ձիաւոր խումբին եւ կը հասնի մինչեւ Արտամետ եւ Դատվան: Մեծ ներդրում կ'ունենայ ընդհանուր նահանջը կազմակերպուած կատարելու ծրագրաւորումին մէջ: Անոր անձնական պաշտպանութեան տակ Վանէն ապահով կը հեռանան Իտալիոյ հիւպատոսը, Հ. Գալիկեանի ընտանիքը եւ Նահատակ Արտաշէս Սոլախեանի կինը՝ Կալիպօն: Կը նահանջէն դէպի Իգդիր: Կ'անցնի Երեւան ու կը վերամիանայ Վարդանի ձիաւորներուն: Կ'իմանայ թէ արկածալից ճամբորդութենէ մը ետք Սեբաստացի Մուրատ հասած է Թիֆլիս: Անմիջապէս կը մեկնի Թիֆլիս, ուր Ս. Մուրատ կը պարզէ իր ծրագիրը, որն էր կազմել 20-30 փորձուած մարտիկներով ձիաւոր խումբ, մտնել Արեւմտահայաստան եւ ռուսական սահմանէն այս կողմ բերել Ջարդերէն ճողոպրած բեկորները: Ս. Վահագն հաւանութիւն կը յայտնէ եւ գործը սկսելու համար կը մեկնի Երեւան: Ազգային Բիւրոն ծրագիրը չի հովանաւորեր: Ստիպուած Ս. Մուրատ, Ս. Վահագն, Կայծակ Առաքել փոքրաթիւ խումբով մը կը մեկնին Պիթլիս, Անդրանիկին միանալու համար: Ճամբան անոնց կը միանայ Սեպուհը: Երկու ամիս կը ստանձնէ Անդրանիկի բանակին երկրորդ վաշտի հրամանատարութիւնը: Ռուսական բանակին հետ իրենք եւս կը նահանաջէն մինչեւ Պաղ գիւղը: Ս. Վահագն կը մեկնի Կարին եւ Երզնկա: Օգտուելով այն առիթէն, որ ռուսական բանակը տակաւին Երզնկայէն չէր նահանջած, Ս. Վահագն 1916 թ.ի վերջերէն կը նախաձեռնէ լեռները ցրուած հայու բեկորները հաւաքելու եւ փրկելու աշխատանքին: Այս նպատակին համար կ'անցնի Տերսիմի քիւրտերուն մօտ, անոնց հետ կը ստեղծէ բարեկամական կապեր ու կաշառքի միջոցով կ'ազատէ մեծ թիւով հայեր: Այդ օրերուն իր, Մուրատի եւ Սեպուհի ստորագրութեամբ մամուլին մէջ լոյս կը տեսնէ «մէկ հայ ազատելու մէկ ոսկի» լոզունքով հանգանակութեան կոչը, որմէ գոյացած գումարը կը յատկացուի քիւրտերու մօտէն հայեր ազատելու գործին:*

*Կեդրոնատեղի ունենալով Ջանծիկ գիւղը, ան իր մօտ կը համախմբէ 7-15 տարեկան որբերը: Եղանակը խիստ ձմեռ ըլլալուն, որբերուն տեղափոխութիւնը կ'ուշանար. ուստի, «Նրանց այբուբեն դաս եմ տալիս, մի կողմից զբաղում ունենալու միւս կողմի փոքրիկներուն լեզուն վարժեցնելու», կը գրէ ան իր յուշագրութեան մէջ: Այս աշխատանքը կը շարունակուի մինչեւ 24 Յունուար 1917: Ձմեռնային խիստ պայմաններու տակ իր կատարած թափառումներուն պատճառով, Ս. Վահագնի ականջը կը ցրտահարուի: Ստոկալի ցաւերէն բուժուելու համար կը մեկնի Թիֆլիս: Հոս եւս բուժումը անհնար կ'ըլլայ: Ընկերներէն Պաղտասար Քորողլեանին բարերարութեամբ կը մեկնի Մոսկուա եւ ամիսներ ամբողջ կ'ենթարկուի բուժման: Այս միջոցին Ս. Մուրատ կը մեկնի Երզնկա ու կը շարունակէ նոյն գործը:*

*Բուժումէն ետք կը վերադառնայ Թիֆլիս, ուր գրեթէ ամէնօրեայ յարաբերութեան մէջ կ'ըլլայ Անդրանիկին հետ:*

*7 Մայիս 1917ին Երեւանի մէջ կը մասնակցի Անդրանիկի նախաձեռնած Արեւմտահայ Ա. համագումարին, որպէս Սեբաստիոյ շրջանի պատգամաւոր: Այդ շրջանին Անդրանիկի եւ Յ.Դ. Դաշնակցութեան միջեւ տարակարծութիւնները հասած էին իրենց գագաթնակէտին: Ժողովին ընթացքին եւ եզրափակիչ ճաշկերոյթին մազ կը մնայ, որ այդ վէճերը վերածուին բախումի: Ծանր հետեւանքներով յղի նման իրավիճակ մը շրջանցել հնարաւոր կ'ըլլայ Ս. Վահագնի եւ կարգ մը լայնախոհ պատգամաւորներու միջամտութեան:*

*Մինչ այդ ռուսական բանակի համատարած նահանջը սկսած էր: 1917 Նոյեմբերին Ս. Վահագն հեռագիր կը ստանայ Ս. Մուրատէն հաւաքել 500 տղայ եւ գալ իր մօտ Երզնկա, թրքական բանակի յառաջխաղացքին դէմ դնելու համար: Ս. Վահագն Ազգային բիւրոյին մօտ շատ կ'աշխատի այս ծրագրին յաջողութիւնը իրականացնելու համար: Ի զուր: Ազգային Բիւրոն անճրկած էր: Վերջինս, օգտագործելու համար Անդրանիկի հեղինակութիւնը, անոր գլխաւորութեամբ կ'ուզէ կազմել զօրաբանակ մը եւ ղրկել ռազմաճակատ: Անդրանիկ չի ճանչնար Ազգային բիւրոյի գերակայութիւնը, կը դժկամակի բանակ կազմել ու իրեն յատուկ տաքարիւնութեամբ կը հակադրուի անոր: Յանձնախումբ մը միջնորդութեան կ'երթայ Անդրանիկի մօտ, որուն ընթացքին տոքթ. Զաւրեան Անդրանիկին կ'ըսէ. «Անդրանիկ, նկատի ունեցիր րոպէն: Ահա քանիերորդ անգամն է հեռագիր կու գայ Մուրատէն (Երզնկայէն): Ոչինչով կրցանք պատասխանել անոր: Այժմ, յուսահատ մեր ընթացքէն, Մուրատ դիմեր է Վահագն Նալպանտեանին, որ եկած է այսօր Ազգային Բիւրոյի մօտ...» (9):*

*Ի վերջոյ Անդրանիկ կը յօժարի, եւ Հայաստանի Երկրապահ Զօրամասը կազմելու համար ճամբայ կ'ելլէ դէպի Էրզրում: Ս. Վահագն կը միանայ Անդրանիկին: Կը հաստատուին Սարիղամիշ: Ճակատին վրայ կը տիրէր անիշխանութիւն, խառնաշփոթութիւն եւ քաոս: Գործող զինուորական, ազգային եւ կուսակցական բազմաթիւ մարմիններ, կացութեան լրջութեան անհաղորդ, ինկած էին անտեղի վէճերու մէջ: Անդրանիկ եւս չի յաջողիր կարգ ու կանոն հաստատել: Միւս կողմէ, Ս. Մուրատ՝ Երզնկայէն եւ Սեպուհ Բաբերդէն անընդհատ օգնական ուժեր կը պահանջէին: Զօրամասի կազմութեան անյետաձգելի գործերով Անդրանիկ կը ստիպուի վերադառնալ Թիֆլիս, ուրկէ ութ օր անց Ս. Վահագնին կը հրահանգէ Թիֆլիսէն նոր ճամբայ ելած 144 տղաներն ու Սարիղամիշ գտնուող զինուորները առնելով մեկնիլ Կարս, կատարել նոր համալրում եւ անցնիլ Էրզրում: Ս. Վահագն կը գործադրէ հրահանգը եւ 800 զինուորներով կը հասնի Էրզրում: Այս միջոցին, Էրզրումի զինուորական խորհուրդը, 4 Փետրուարին կ'որոշէ նահանջել: Սա կը նշանակէր Ս. Մուրատի եւ Սեպուհի փոքրաթիւ խումբերն ու անոնց ապաւինած բազմահազար գաղթականութիւնը լքել անօգնական եւ միւս կողմէ ռուսական բանակի հարուստ պահեստները ձգել թրքական բանակին: Ս. Վահագն կոպիտ ձեւով կ'ընդդիմանայ այս որոշումին: Անոր նպատակն էր ռազմաճակատին վրայ գտնուող իր բուռ մը զինակիցներուն անմիջական օգնութեան հասնիլ: Այս նպատակին համար, ան Էրզրում հասած օրն իսկ, բաբերդցի 80 կամաւորներ կը ղրկէ Բաբերդ՝ Սեպուհի օգնութեան, ապա, ինք եւս, սպայ Մելիք Փարսադանեանի հետ 50 ձիաւորներու գլուխը անցած, կը փութայ ռազմաճակատ: Բունկապանի մէջ կը հանդիպի Սեպուհին, որ իր հիմնական ուժը ճակատին վրայ ձգած 14 ձիաւորներով կը շտապէր դէպի Էրզրում՝ օգնական նոր ուժեր բերելու համար: Այդ շրջանին Ս. Մուրատ կը նահանջէր Դերջանէն, իր ճամբուն վրայ կրակի տալով ռուսական զօրապահեստները: Սեպուհ եւ Ս. Մուրատ հեռախօսով կը համաձայնին հանդիպիլ Գարապըյըգի մէջ եւ միասին երթալ Էրզրում: Սեպուհ ռազմաճակատի հրամանատարութիւնը կը յանձնէ Մելիք Փարսադանեանին: Վերջինս կը տատամսի նման պատասխանատու պարտականութիւն մը ստանձնելէ: Այս մասին Սեպուհ կը գրէ. «Մելիք Փարսադանեան չէր ուզեր որ մեկնէի, չեմ գիտեր ինչու: Ան գոհ չէր որ այս լերան գլուխը կը մնար եւ պատասխանատուութիւն կը ստանձնէր: Եւ Մելիք Փարսադանեան կը վախնար, կը կմկմար եւ չէր ուզեր մնալ: Վահագն, այդ հինաւուրց ֆետային, բարբառեցաւ եւ ըսաւ անոր.*

*– Գնա, մենք կը մնանք այստեղ եւ կը պաշտպանենք այս դիրքերը, եւ կը նահանջենք միայն այն ատեն, երբ հրաման կը ստանանք:*

*Այս սրտապնդիչ խօսքերուն վրայ Մելիք Փարսադանեան ոգեւորուեցաւ եւ խոստացաւ մնալ ու կռուիլ թշնամիին դէմ եւ նահանջել այն ատեն, երբ տեղը պաշտպանել այլեւս անկարելի կը լինի»(10):*

*Փարսադանեանի հրամանատարութիւնը որոշ չափով ձեւական էր. այդ պարզապէս գործող օրինական բանակի ընդհանուր հրամանատար Արեշովի հետ յարաբերութիւնները լաւ պահելու համար էր: Փաստօրէն, ճակատի իրական հրամանատարը կը դառնայ Ս. Վահագն:*

*«Աշխարհացոյց»ը նախապէս վերագրուած էր 5-րդ դարու մեր պատմահօր Մովսէս Խորենացիին: Սակայն բանասէրներու կողմէ «Աշխարհացոյց»ին որպէս աւելի հաւանական հեղինակ ճշդուեցաւ 7-րդ դարու հայ մեծ գիտնական, աստղագէտ եւ աշխարհագրագէտ Անանիա Շիրակացին: Սուրէն Երեմեան անհաւանական կը գտնէ գործին Շիրակացիին վերագրումը որուն խմբագրութիւնը կը տեղաւորէ 591-610 թուականներուն միջեւ, մինչդեռ Անանիա Շիրակացի ծնած է յաջորդ տարին ու ապրած մինչեւ 685 թուականը (610-685):*

*Հակառակ հեղինակին վերոյիշեալ վարկածին, յետագայ քննարկումները «Աշխարհացոյց»ը ճանչցան որպէս Անանիա Շիրակացիի գործը, տրուած ըլլալով ժամանակն ու իր մեծ գիտնականի համբաւը որպէս թուաբանագէտ, աստղագէտ, տոմարագէտ եւ աշխարհագրագէտ: Երեմեանի մէկ կարեւոր նկատողութիւնն այն է որ բնագրին հեղինակը, Խորենացին կամ Շիրակացին, «Աշխարհացոյց» ըսելով »քարտէզ« կը հասկնար եւ կամ «քարտէզներու ժողովածու», սակայն երբ ժամանակի ընթացքին քարտէզները կորսուեր են, մնացեր են անոնց բնագիրը, կամ բացատրագիրը: Ըստ Երեմեանի այդ բնագիրները իբրեւ աշխարհագրութեան դասագիրք մնացին եւ օգտագործուեցան դպրոցներու մէջ:*

*Աւելի յստակ կերպով Երեմեան կ'ըսէ. «Աշխարհացոյց-ի բնագիրը մեծ մասամբ մեզ հասել է ձեռագիր այն ժողովածուներում որտեղ գտնւում էր Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն»ը, կամ Անանիա Շիրակացու երկերը: Ուստի ան վերագրուեց Մ. Խորենացուն կամ աւելի նուազ Անանիա Շիրակացուն» (Ներածական էջ 19):*

## Մեծածաւալ Քարտէզը

*Հատորի ետին որպէս յաւելուած ութածալ տարածութեամբ կը գտնէք Հայաստանի մեծադիր եւ աչքառու քարտէզը ըստ «Աշխարհացոյց»ին, զոր ամենայետին մանրամասնութեամբ հեղինակը՝ Սուրէն Երեմեան վերականգնած է: Մեծ Հայքն է տիրապետող մասը այդ քարտէզին ուր պատմական ամէն անուն ընթեռնելի է եւ դիւրաւ գտանելի:*

*Երկու օրինակներ կրնան գաղափար մը տալ թէ ի՛նչ ձեւով կարելի կ'ըլլայ գտնել այն վայրը որուն անունը կը գտնուի «Աշխարհացոյց»ին մէջ: Անոնցմէ առաջինն է «**ԱԲԵՂԵԱՆՔ**» յատուկ անունը, բացատրագիր կոչուած գլխուն սկիզբը այբենական ցանկագրութեամբ: Կը մէջբերեմ:*

*«Աբեղեանք - Այրարատ Նահանգի 3-րդ գաւառ: Աբեղեանք գաւառը գտնւում է Երասխ գետի ձախ ափին եւ Մեծրաց Լեռների (Սողանլու-տաղ) միջեւ, Մըժըրնկերտ գիւղի շրջանում: Աբեղեանք գաւառի ժառանգական կառավարիչների տոհմը կոչուեց «Աբեղեանք», իբրեւ առանձին նախարարական տուն: Այս գաւառի մօտաւոր տարածութիւնն էր 1,000 քառ. քմ.»:*

*Երկրորդ օրինակը մեզի ծանօթ Փոքր Ասիան է (Թուրքիա) որուն տեղադրութեան մասին «Աշխարհացոյց»ը կ'անուանէ «Միջերկրեայք», որ իսկական պատկերը կուտայ 6-7 դարերու վարչական ու քաղաքական բաժանումներուն:*

*«Միջերկրեայք - Այստեղ հեղինակը աշխատում է որոշ պատմական փաստերով կապ գտնել հայ ժողովրդի եւ յոյների պատմական անցեալի միջեւ: Բնորոշ է այս տեսակէտից հետեւեալ բաժինը որը նա անուանում է Միջերկրեայք: Այստեղ հեղինակը տալիս է Փոքր Ասիայի վարչական-քաղաքական բաժանման այն պատկերը, որը գոյութիւն ունէր իր ժամանակ, այսինքն՝ 6-7րդ դարերում»:*

*Կ'եզրափակեմ սոյն յօդուածը շեշտելով այն բարեբախտ ժառանգութիւնը զոր իրենց ետին թողուցին Սովետական շրջանի մեր քաջ եւ երախտարժան, թիւով եւ որակով բարձր ու անբաղդատելի բանասէրներն ու պատմագէտները, որոնց շարքին Սուրէն Տ. Երեմեան կը փայլի որպէս առաջնորդող աշխարհագրագէտը հայ ժողովուրդի պատմութեան:*

massispost.com
daily news updates



# ԷԼԻԶԱԲԷԹ Բ.Ի ԹԱԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Սոյն յօդուածը գրուած է Վաչէ Աբեղայ Յովսէփեանի կողմէ, այժմ Վաչէ Արքեպիսկոպոս, 1953-ին, 60 տարիներ առաջ, Անգլիա իր ուսանողութեան տարիներուն, Անգլիոյ Թագուհի Էլիզաբէթ Բ.ի թագադրութեան առիթով, որուն ականատես եղած է հեռատեսիլի վրայ Մանչեստր քաղաքին մէջ: Յօդուածը իր ժամանակին տպուած է Պէյրութի «Զարթօնք» օրաթերթին մէջ:



*ՎԱՉԷ ԱԲԵՂԱՅ ՅՈՎՍԷՓԵԱՆ*

*Ծորճ Զ. Թագաւորի վախճանումէն ասդին Էլիզաբէթ Բ.ի թագադրութեան համար տեսնուած պատրաստութիւնները վերջապէս իրենց լրումին հասան այսօր, Յունիս 2-ին, Ուեսթմինսթըր Էպիին մէջ ձեռամբ Նորին Սրբազնութիւն Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսին, ի ներկայութեան Թագուհիի, բազմաթիւ պետական անձնաւորութեանց իշխաններու գաղթապետութեանց վարչապետներու, դուքսերու, նաեւ Լոնտոնի Հայոց Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Պսակ Վարդապետ Թումայեանի եւ ուրիշներու:*

*Նախքան Թագադրութեան նկարագրութեան եւ անոր խորհուրդին անդրադառնալը, ակնարկ մը նետենք ամիսներ տեւող պատրաստութեանց վրայ:*

*Երբ երկու ամիս առաջ Անգլիա հասանք, արդէն Փարիզէն Մանչեսթըր թռչող օդանաւին մէջ առաջին անգամ ըլլալով տեսանք մաս մը զարդարանք: Ծորճ Զ. Թագաւորի վախճանումէն հազիւ ամիս մը յետոյ սկսան տեսնուիլ Թագադրութեան պատրաստութիւնները: Սկսան շինուիլ փողոցներու երկաթեայ նստարանները, որոնց վրայ նստեցան միլիոններով մարդիկ, մասնաւոր վճարումներով: Լոնտոն անճանաչելի դարձաւ մասնաւորաբար վերջին շաբաթներուն: Չկար փողոց մը որ զարդարուած չըլլար: Աչքառու էր մանաւանդ «Թագուհին-ձիու-վրայ նստած« հսկայ արձանը:*

*Աւելի Մանչեսթըրին ծանօթ ըլլալով, փորձենք անփոփ նկարագրականը ընել այդտեղի պատրաստութեանց: Մանչեսթըր աշխարհի ամէնէն աղտոտ քաղաքներէն մին է. հոս ճերմակ շապիկի մը մաքրութիւնը կը տեւէ հազիւ երկու ժամ: Քանի մը ժամ չլուացուող մարդ մը կը նմանի խափշիկի մը, քիչ մը ճերմկցած ափրիկեան սեւամորթի մը: Քաղաքին արտաքին կերպարանքը, մասնաւորաբար օտարականներու համար, յուսահատական է. տուները կարծէք ածուխի զանգուածներ ըլլային. գրեթէ բոլոր տուները ունին նոյն ոճը, շինուած են կարմիր կղմինտրներով՝ որոնց գոյնը սեւի փոխուած է: Գիւղական տուները կը պահեն իրենց գոյնը որոշ չափով, ֆապրիքաները հեռու են: Զգայացունց վերջին նորութիւնը՝ արեւելքցիներու համար՝ տեսնելն էր տուներու մաքրութեան նոր ձեւը. ընթերցողներ գուցէ պիտի չհաւատան ինծի, երբ ըսեմ թէ Թագաւորութեան առթիւ մեծ ընկերութիւններու շէնքերուն պատերը սկսան տաք ջուրով լուացուիլ եւ օճառուիլ. արդիւնքը այն եղաւ՝ որ կարմրուկ կղմինտրները իրենց գեղեցկութեամբը երեւան ելան, եւ սակայն, ըստ անգլիացի բարեկամի մը, շէնքերուն կեանքէն պակսեցան առնուազն 25 տարի:*

*Մանչեսթըրի մէջ չկայ փողոց մը կամ անկիւն մը որ զարդարուած չըլլայ. Թագուհիին նկարները ամէն կողմ կը տիրապետեն: Տակաւին մինչեւ այսօր չեմ տեսած նկար մը, ուր Թագուհին նրբօրէն եւ «մայրաբար» չժպտի, իւրաքանչիւր նկարի մէջ մասնաւոր հրապոյրով մը կը ներկայանայ իր ժողովուրդին: Թագուհիին նկարը կամ «անգլիական առիւծը» կամ դրօշակը կը տեսնուին ամենուրեք՝ պետական շէնքի գագաթէն սկսեալ մինչեւ տաճարներու վերեւը, ի միջի այլոց մեր եկեղեցւոյ, չկայ խանութ մը որ Թագուհիին նկարը կամ Էտինպուրկի դուքսին եւ կամ անոնց զաւակաց նկարը չունենայ, խանութներու մէջ կը ծախուին «Թագադրութեան շոքոլա», կամ «Թագադրութեան պաղպաղակ» եւայլն. նոյնիսկ ֆութպոլի խաղը «Թագադրութեան բաժակի» համար է: Զարդարուած են նաեւ սրճարանները եւ գարեջրատուները, որոնց դուռերուն վրայ կը կարդանք «Աստուած պահէ Թագուհին»: Քաղաքի Ս. Պետրոս հրապարակը եւ մասնաւորաբար Փիքետելին Թագադրութեան առթիւ աննախընթացօրէն շքեղազարդուած են: Փիքետելիի վրայ Թագադրութեան առթիւ շինուեցաւ մասնաւոր աւազան մը, որուն բացումը կատարեց քաղաքապետը. ի դէպ, այդ գեղեցիկ աւազանին երկրաչափն է Պր. Արթօ Արշաւիր, որ Մանչեսթըրի համալսարանի դասախօսներէն է. հայախօս է ան՝ հակառակ Մանչեսթըր ծնած եւ մեծցած ըլլալուն:*

*Մէկ խօսքով, Թագադրութեան առթիւ աղտոտ Մանչեսթըրն իսկ դարձաւ «գեղեցիկ պուպրիկ մը»:*



### *ԷԼԻԶԱՊԷԹ Բ.Ի ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ*

*Ժամը ճիշդ 10:30-ին Թագուհին ընկերակցութեամբ իր ամուսնոյն, դուրս ելաւ Պըքինկէմի պալատէն, եւ նստած 192 տարուան հնութիւն ունեցող արքայական ոսկեպատ կառքին մէջ, ուղղուեցաւ դէպի Ուեսթմինսթըր Էպի, միլիոնաւոր մարդոց հուռռաներուն եւ վիվաներուն մէջէն:*

*Արքայական շքերթին կը մասնակցէին Թագուհիին մայրն ու քոյրը, Վարչապետ Չըրչիլ եւ գաղթապետութեանց վարչապետները, հիւր վեհապետներ ու իշխաններ, դուքսերու զինուորական պետեր, Թագուհիին անձնական պահակագունդը եւայլն եւ այլն. շքերթի երկարութիւնն էր երկու քիլոմեթր: Էպին լեցնող եօթը հազարնոց բազմութենէն ոչ մէկ ձայն կը լսուէր, երբ արքայական ընտանիքը ներս կը մտնէր: Եօթը հազար ժողովուրդին մէջ դիւրաւ կը զատորոշուէին մեր արաբ եղբայրները՝ իրենց ազգային ակիլներով եւ կալապայաներով: Ի վերջոյ Թագուհիններս մտաւ մեռելային լռութեան ընդմէջէն. յետոյ մտաւ եպիսկոպոսական դասը:*

*Սբ. Էտուըրտի գահը, որուն վրայ պիտի նստէր Թագուհին, կ'ըսպասէր իր գահակալին: Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսին առաջնորդութեամբ, Թագուհին տաճարին արեւելեան, արեւմտեան, հիւսիսային եւ հարաւային կողմերը դարձաւ կարգաւ՝ հաւատարմութիւնը առնելու ժողովուրդին, իւրաքանչիւր անգամուն Արքեպիսկոպոսը կ'ըսէր. «Սիրելիներ, ես Ձեզի կը ներկայացնեմ Էլիզապէթ Թագուհին, Ձեր անկեղծ Թագուհին, դուք բոլորդ եկած էք այսօր հնազանդելու եւ ծառայելու. կը խոստանա՞ք ընել այդ բաները». իւրաքանչիւր անգամ ժողովուրդը կը պատասխանէր՝ «Աստուած պահէ Էլիզապէթ Թագուհին» եւ Թագու-*

*Շար.ը էջ 18*



# ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՇՈՒՐՋ

**ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ**
**«ԿԱՄԱՐ» 15**




Ազգային եւ միջազգային գրականութեան մէջ կան այնպիսի դէմքեր եւ անհատականութիւններ, որոնք հակառակ իրենց անառարկելի արժէքին՝ խնդրայարոյց կեցուածքներով հակասական վերաբերումներու արժանացած են: Այդպիսի երեւոյթներէն է Կոստան Զարեանը՝ իր գրական կեանքը սկսած տարիներէն մինչեւ անոր վախճանը:

Ծնունդով արեւելահայ (ծնած Շամախի), լեզուն՝ արեւելահայերէն: Նախակրթարական ուսումը ռուսական, ապա Ֆրանսա փոխադրութեամբ երկրորդական եւ համալսարանական կազմաւորումը ֆրանսերէնով եւ արեւմտա-եւրոպական մշակոյթի իւրացումով կը յատկանշուի Կոստան Զարեան մտաւորականը:

Օտարագիր գրող մը կը դառնար եւ իր գրողական տաղանդով յաջողութիւններ ալ կ'արձանագրէր Կոստան Զարեան, եթէ ծագումով պելճիքացի ֆրանսագիր գրող Էմիլ Վերհարնի հետ ճակատագրական հանդիպումէն ետք հայկականութեան արթնացումով իր մանկութեան աղօթած լեզուին չվերադառնար եւ Վենետիկի մէջ հայերէն լեզուին եւ ազգային ժառանգութեան տիրապետելով հայերէն չգրէր: Հայ գրականութեան համար բարեբախտութիւն եղաւ հայերէն գրելը: Իրմով նոր նուաճումներ արձանագրեցին հայ գրականութեան վիպական, քերթողական, խոհագրական բնագաւառները իրենց լեզուա-ոճային գունագեղութեամբ: Նոր տարածքներու ընդգրկումով եւ մեծաշունչ թափով: Ծաղկեցուց հայ գրականութիւնը իմացական խորքով եւ մշակոյթով:

Կոստան Զարեանի լեզուն առանձին պարագայ է: Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի առանձնայատկութիւններու միախառնումով (պահելով արեւելահայերէնի քերականական կառոյցը), բառակերտումներով նոր փայլ տուաւ հայերէնի գեղեցկութեան: «Բառերի ոսկին» փնտռելով եւ ընտրելով վերակերտեց լեզուն: Իր լեզուն: Ըսուած է, Կոստան Զարեանի առիթով աւելորդ չէ կրկնելը, թէ լեզուն ինքնին արուեստ է: Կայ իր վկայութիւնը իր լեզուի մասին. «Ես չգիտեմ, թէ ինչպիսի բանաստեղծ եմ կամ ինչ ուժի վիպասան, բայց մի դեր խաղացել եմ գրականութեան մէջ, միացրել եմ արեւմտահայ եւ արեւելահայ լեզուները: Ինչ ուզեց, բայց չկարողացաւ Շանթը՝ արի ես»: (Ռուբէն Զարեան, «Յուշապատում», Բ. հատոր, Երեւան, 1977): Հայ գրականութեան ծառայելու մղումով, նոր մեհեաններ կառուցելու թռիչքով եւ ներշնչումով Կոստան Զարեան կու գայ Կ. Պոլիս,- հայ գրական կեանքի կեդրոններէն հանդիսացող քաղաքը,- եւ իր ճիգը միախառնելով արեւմտահայ գրողներու ստեղծագործական եւ մտաւորական կեանքին՝ Նոր Խօսքի, Նոր Զայնի բանբերը հանդիսացաւ: Նախաեղեռնեան տարիներուն (1914) »Մեհեան« գրական հանդէսի եւ յետեղեռնեան տարիներուն (1922) «Բարձրավանք»ի հրատարակութիւնները գրականութեան, արուեստի եւ միտքի աշխարհէն ներս նոր ճառագայթումներ էին, որոնք գրական-իմացական կեանքին նոր շունչ, ուղղութիւն, նոր ճաշակ եւ ոգեւորութիւն տուին:

Երկուքն ալ Կոստան Զարեանի անունին կապուած ձեռնարկներ էին իր նախորդներէն տարբեր ձգտումներով, գործակցութեամբ արուեստագէտ եւ գեղագէտ հեղինակութիւններու՝ Յ. Օշականի, Վ. Թէքէեանի, Գ. Բարսեղեանի, Շ.Ռ. Պէրպէրեանի:

Կոստան Զարեանի անունը տեղ գրաւեց գրասէր հասարակութեան եւ գրական ընտրանիի մօտ, որքա՜ն ալ Եւրոպայէն եկած գրագէտի ամբարտաւանութիւնը չհանդուրժուեցաւ...:

Իր կեցուածքներով զարմացնող գրագէտը 1922-ին Կ. Պոլիսը ձգելով ընտանեօք հաստատուեցաւ Խորհրդային Հայաստան: Զարմացնողը այն երեւոյթն էր, որ Կոստան Զարեան ծանօթ էր իր արեւմտեան մտածողութեամբ եւ հոգեպաշտ աշխարհահայեացքով բանաստեղծ-մտաւորական մը, որուն փիլիսոփայական հայեացքները կը հակադրուէին Խորհրդային Հայաստանի վարչակարգին եւ անոր մարքսեան վարդապետութեան: Զհամոզուելու պատճառ վկայ, երբ հայրենի Զարեանագէտ Եուրի Խաչատրեան կ'անդրադառնայ Կ. Զարեանի Խորհրդային Հայաստան փոխադրուելու մասին կարեւոր իրադարձութեան. «Այնուամենայնի, նախընտրում է գնալ Սովետական Հայաստան, քան թէ վերադառնալ Եւրոպա»:

Նա որոշում է մեկնել Հայաստան, որովհետեւ, երկիրը եւ ժողովուրդը՝ հայրենիքը, երբեւիցէ անկարելի է նոյնացնել Ռեժիմի եւ իշխանութեան»: («Անցորդը եւ իր ճամբան», Սարգիս Խաչենց հայրենական հրատարակութեան յառաջաբանէն):

Հակառակ այն հաստատումին, որ ռեժիմով չի պայմանաւորուիր գրագէտի մը հայրենադարձութիւնը, Կոստան Զարեան երկու տարի ապրելէ ետք Խորհրդային Հայաստան (1922-1924), կը վերադառնայ արտասահման, անցնելով աշխարհի տարբեր ոստաններու ճամբաներէն: Հայաստան բնակութեան տարիներուն, որպէս դասախօս Երեւանի պետական համալսարանի, կը դասաւանդէ արեւմտահայ գրականութիւն եւ արտասահմանեան գրականութիւն: Հանդէս կու գայ արուեստի շուրջ յօդուածներով: Կը գրէ բանաստեղծութիւններ եւ «Հայաստանում» պոէմը: Հայաստանէն դուրս կ'որոնէ սակայն, իր գրողի ճակատագրի ճամբաները: Այդ ճամբաները կը հակադրուին հայրենիքին եւ անոր խորհրդային իրականութեան:

Արդարեւ , Կոստան Զարեան արտասահման փոխադրուելէ ետք, կը կապուի «Հայրենիք» ամսագրին եւ հոն կը գրէ իր արձակ ստեղծագործութիւնները՝ «Անցորդը եւ Իր Ճամբան», «Բանկօօպը եւ Մամութի Ոսկորները», որոնք հայ արձակի ոչ միայն շքեղ արտայայտութիւններն են իրենց խոհա-փիլիսոփայական խորքով, այլեւ՝ նորարար շունչով: Շպենգլըրեան մտածողութեան հետեւողութեամբ, բայց ինքնուրոյն ոճով եւ խորունկ թափանցումով, կը կատարէ արեւմտեան քաղաքակրթութեան հետ մաթերիալիստական ուսմունքի բուռն եւ անխնայ քննադատութիւն: Այս շրջագիծէն ներս հեգնախառն պատկերացումներով թիրախ կ'ունենայ Հայաստանի համայնավարական բարքերը, որոնք հայ հոգիին հաշտ չի նկատեր:

Շահան Շահնուրի «Նահանջը Առանց Երգի» վէպէն տասնամեակ մը ետք, Կոստան Զարեանի «Նաւը Լերան Վրայ» վէպը նոյնպիսի գրական երեւոյթ եղաւ, սփիւռքահայ գրականագիտական միտքի կողմէ նկատուելով սփիւռքահայ վէպի նուաճումներէն: Երկու վէպերն ալ բարձր արժէքով գնահատուեցան, նոյնիսկ եթէ գրուե ցան քննադատական-խծբծական ակնարկներ:

Կոստան Զարեան կուռքն էր իր աշխատակցած մամուլի ընթերցողներուն եւ մասնաւորաբար «Հայրենիք» ամսագիրի շրջանակին: Կը փնտռուէր իր յանդուգն ոճին, երեւակայութեամբ ապրուած իրականութեան եւ հայ ոգիին պաշտամունքը կատարող գրութիւններուն համար: Վերապահ էր խորհրդահայ գրականագիտական միտքը: Ոչ միայն վերապահ այլեւ՝ վարկաբեկող եւ արժեզրկող: Անարգական վերաբերումը ի՞նչ աստիճանի հասած ըլլալու է, որ Եղիշէ Զարենց Կոստան Զարեանին վերնագրուած համառօտ քառեակին մէջ Կոստան Զարեանը կը նմանցնէ այն հանրային կնոջ (պոռնիկ), որ կը տրուի անո՛ր, որ ամէնէն աւելի կու տայ: Անծանօթ չէ այն պարագան, որ «Հայրենիք» ամսագիրը կը յարգէր այդ տարիներուն հեղինակի իրաւունքը՝ նիւթական յատկացում կատարելով իր աշխատակիցներուն: Կոստան Զարեան օգտուած է այդ պատեհութենէն: Բայց Ե. Զարենցի ակնարկութիւնը կը մնայ անպատշաճ իր մեծատաղանդ գրչակիցին նկատմամբ...:

1962 թուականին Կոստան Զարեան որոշեց վերջնականապէս հաստատուիլ Հայաստան: Համոզուած այն իրականութեան, որ հայութեան ապագան հոն կը դարբնուի եւ հայ մշակոյթին Աթէնքը Երեւանի մէջ կը կերտուի: Հակախորհրդային ըլլալը դեռեւս չ'արդարացներ խորհրդային եօթանասուն տարիներու ազգային մշակոյթի ծաղկումն ու վերելքը ուրանալը:

Երեւանի մէջ Կոստան Զարեանի մեծութեան ծանօթ եւ գաղափարներու աշխարհին հաղորդագրողներ եւ մտաւորականներ չպակսեցան, որոնցմէ ոմանք շրջապատեցին ալ զինք:

Գտնուեցան նաեւ անտարբեր-

Շար.ը էջ 19



# ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*ծող հայկական զօրամիաւորները կը նահանջէին: Կը նահանջէին Սեպուհը, Ս. Մուրատը, Ստեփան Ծաղիկեանը. կաղզուանէն կը նահանջէ Անուշաւանը, Բարդուղէն՝ Պանդուխտը: Նահանջող ուժերուն մեծ մասը կը կեդրոնանայ Կարս: Վերջին նահանջողը կ'ըլլայ Ս. Վահագնը: Անոր ձիաւոր խումբին մուտքը Կարս կ'ըլլայ շքեղ եւ որոշ չափով ալ ցուցադրական՝ ժողովուրդին կորովը բարձրացնելու նպատակով: Այս մասին Սեպուհ կը գրէ. «Մեր Կարս հասնելէ երկու օր յետոյ, Սարիղամիշի հրամանատարութենէն իրաւունք ստացանք ետ կանչել մեր ձիաւորները եւ հանգստանալ: Հետեւաբար հրահանգ ղրկեցինք Վահագն Նալպանտեանին, որ անմիջապէս Կարս գայ: Մեր հրահանգը ճշդութեամբ կատարեց Նալպանտեան եւ ձիաւորները մտան Կարս: Ամբողջ ժողովուրդը դուրս թափեցաւ տեսնելու զանոնք: Այս մուտքը տեղի ունեցաւ մեծ շուքով եւ Վահագն Նալպանտեան արժանացաւ այնպիսի ծափահարութիւններու, որոնց նմանը երբեք տեսած չէր իր կեանքի օրերուն: Ձիաւորներու առջեւէն կու գար ան, հեծած գեղեցիկ նժոյգի մը վրայ, իսկ իրեն հետեւող երկու շարքով ձիաւորները, թիւով 350-էն աւելի, ահագին տարածութիւն կը բռնէին եւ ժամէն աւելի շրջեցան քաղաքը եւ ամէն կողմէ ծափերով եւ կեցցէներով դիմաւորուեցան: Ապա գացին եւ տեղաւորուեցան իրենց յատկացուած զօրանոցը» (12):*

*Հայ կամաւորները կ'արժանանան բանակի հրամանատարութեան անարդար վերաբերմունքին: Անոնցմէ մէկ մասը կը զինաթափուի: Խմբապետները կը մեղադրուին բանակի հրամանատարութեան հրահանգներէն դուրս գործած եւ թրքական գիւղերու վրայ անտեղի յարձակումներ կատարած ըլլալու մեղադրանքներով: Ամիսներ ամբողջ թրքական յարձակումին դիմաց միայնակ մարտնչած շատ մը հայդուկապետերուն վրայ այս մեղադրանքները ժխտական կ'անդրադառնան: Ս. Մուրատ եւ Սեպուհ կը մեկնին Թիֆլիս: Այս կ'ըլլայ նաեւ պատճառներէն մէկը, որ անառիկ թուացող Կարսը 10 Ապրիլին իյնայ առանց դիմադրութեան: Ս. Վահագն, Անդրանիկի նամակ-հրաւէրին ընդառաջելով կը մեկնի անոր մօտ՝ Ալեքսանդրապոլ: Անդրանիկ, որ կը բողոքէր Տրապիզոնի բանակցութիւններէն, կ'առաջարկէ Ս. Վահագնին միանալ իրեն եւ անցնիլ Պարսկաստան: Ան պարտականութիւն կու տայ այս մասին համոզել Ս. Մուրատն ու Սեպուհը՝ որոնք կը գտնուէին Թիֆլիս: Ս. Վահագն կը մեկնի Թիֆլիս:*

*Խուճապի մէջ էր նաեւ Թիֆլիսը: Արեւմտահայ հայդուկապետերու ներկայութիւնը Թիֆլիս կը նկատուի վտանգաւոր եւ «անբաղձալի»: Սեպուհ եւ Մուրատ չեն համաձայնիր երթալ Անդրանիկի մօտ: Հասարակական կարծիքին առջեւ տեղի տալով Ս. Վահագն, Ս. Մուրատ, Սեպուհ, Ստեփան Ծաղիկեան, տոքթ. Արշակ Պօղոսեան, Գրիգոր Ամիրեան եւ իրենց հետ ունենալով Երուանդ Խաթանասեան եւ ուրիշներ, վարձու երկու ինքնաշարժերով կ'ապաստանին Վլատիկավկաս: Ապա շոգեկառքով կը մեկնին Արմաւիր: Հոս եւս վիճակը վտանգաւոր եւ խառնակ էր: Ամբողջ տարածաշրջանը բաժնուած էր երկու մեծ բանակներու՝ պոլշեւիկներու եւ սպիտակներու, որոնք փոխադարձ յաղթանակներով անխնայ պայքար կը մղէին իրար դէմ: Սկիզբը միտք կը ծագի երթալ Ցարինցին, այնտեղէն Մոսկուա, հանդիպիլ Լենինին եւ Հայաստանի անունով խնդրէին անկէ թոյլատուութիւն ու միջոցներ կազմելու մի բանակ, եւ միանալով Պաքուի ուժերուն, քայլէինք հարաւ-արեւմուտք եւ վերագրաւէինք այն հողամասերը զորս գրաւած էին թուրքերը»: Սակայն, «Ցարինցինից Մոսկուա գնալ նշանակում էր սանդարամետի բաւիղներով անցնել, մահուան ուրուականը հալածել: Մուրատն ու Սեպուհը ընդմիշտ հրաժարեցան ուղեւորութիւնից, Լենինի հետ տեսակցելու մտքից» (13): Շուրջ մէկ ամիս կը մնան Ցարինցին, ուր այս նպատակով տեսակցութիւններ կ'ունենան նաեւ համայնավար ղեկավարներու հետ: Վերջապէս կ'որոշեն կապ պահել Պաքու, Շահումեանին հետ «որ գուցէ դիւրացնէր մեր ծրագիրը եւ ա՛լ պէտք չտեսնայինք Մոսկուա գնալու: Ուստի, որոշեցինք Գրիգոր Ամիրեանը եւ Վահագն Նալպանտեանը նամակներով ղրկել Պաքու: Նկատի ունէինք մանաւանդ Վ. Նալպանտեանը, որ լինելով հնչակեան, իբրեւ թէ մօտէն ծանօթ էր Ս. Շահումեանին» (14):*

*Այս նախաձեռնութիւնը անհիմն չէր: Ճիշդ այդ օրերուն, մէկ այլ հնչակեան գործիչ, վաղեմի մարտիկ Տիգրան Գազանճեան, Ս. Շահումեանի յանձնարարականով՝ յղուած Ստալինին, Հիւսիսային Կովկասի մէջ յաջողած էր վերազինել Թիֆլիսի մէջ զինաթափուած իր 500 զինուորները, որոնք Պաքու գալով, արդէն իսկ կը մասնակցէին Պաքուի պաշտպանութեան կռիւներուն (15): Ուստի, Ս. Վահագն, առանց տատամսելու 7 Յունիսին Ցարինցինէն Վոլկայի վրայով նաւով կը մեկնի Աստրախան եւ անկէ Պաքու: Կը հանդիպի Ս. Շահումեանին եւ անոր մէջ կ'իմանայ Պաքուի քաղաքական եւ զինուորական դրութիւնը եւ կը բացատրէ իրենց մտադրութիւնը: Շահումեան անմիջապէս կու տայ 9 Յունիս թուակիր յանձնարարագիր մը, ուր կ'ըսուի. «Հայ հերոսներ՝ Մուրատը, Սեպուհը եւ ընկ. Վահագնը գալիս են ձեզ մօտ հայկական ուժերը կազմակերպելու՝ Պաքուին օգնութիւն հասցնելու նպատակով: Խնդրում եմ ամենալայն աջակցութիւնը ցոյց տալ» (16): Ս. Վահագն կը հանդիպի նաեւ Ազգային Բիւրոյի եւ Դաշնակցութեան պատասխանատուներուն հետ, որոնք այս ծրագրին համաձայն չեն ըլլար: 18 Յունիսին Աստրախանի վրայով կը վերադառնայ Ցարինցին: Տրուած յանձնարարականներով կը ներկայանան պոլշեւիկ ղեկավարներու, որոնք սիրայօժար կ'ընդունին տրամադրել ամէն ձեւի օգնութիւն՝ մանաւանդ որ անոնք այս կապակցութեամբ արդէն ստացած էին Շահումեանի հեռագիրը: Սակայն, քաղաքացիական կռիւներուն ընդարձակման պատճառով ճամբաները կը փակուին եւ ծրագիրը կը ձախողի: Միւս կողմէ տարակարծութիւններ կը ծագին նաեւ հայ խմբակի անդամներուն միջեւ: Ի վերջոյ, Ս. Վահագնի առաջարկով, վեց հոգի, որոնց մէջ Ս. Մուրատ եւ Սեպուհ կը մեկնին Պաքու:*

*Պաքուի մէջ Ս. Վահագն կը նուիրուի քաղաքի պաշտպանութեան աշխատանքին եւ սերտօրէն կը գործակցի Ս. Շահումեանի հետ: 4 Օգոստոսի առաւօտեան, ճակատային գիծը կատարած այցելութեան ժամանակ, Ս. Մուրատ կը նահատակուի: Ս. Վահագն անմիջապէս կը շտապէ դէպքին վայրը: Կրկնակի ցաւը այն էր, որ Մուրատ զարնուելէն ետք գլտորած էր բլուրէն վար եւ դիակը կը գտնուէր թշնամի դիրքին շատ մօտիկ: Դիակը ձեռք ձգելու բոլոր փորձերը կ'անցնին ապարդիւն: Միակ ճարը գիշերուան սպասելն էր: Սեպուհ, գիշերային այդ փորձը այսպէս կը նկարագրէ. «Հասաւ ցանկալի ժամը: Թշնամի խարոյկները վաղուց հանգած էին: Հրամայեցի, որ շարժինք յառաջ: Ես ահա նոյն րոպէին, ստեփան (Ծաղիկեան., Ե. Ճ) ու Վահագն Նալպանտեան ըմբոստանալով՝ կտրուկ կերպով պահանջեցին, որ տոքթ. Արշակ եւ ես ետ մնանք ու չընկերանանք իրենց: Ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակ կար այս ըմբոստական պահանջին մէջ, անոնք մերժեցին բացատրել մեզի: Եւ այդ ըմբոստ ոգիները առաջացան դէպի պառկած հսկան: Ժամ ը հազիւ անցաւ, ահա հրացաններն սկսան նորէն պայթիլ, շուտով ուժեղ կռիւի մը փոխակերպուելու հաւանականութեամբ: Լեռ ու ձոր կը դղրդար ու կը թնդար: Ամբողջ զինուորութիւնը, կազմ ու պատրաստ, նոր պայքարին մասնակցելու կը սպասէր: Երկար չտեւեց այս կացութիւնը: Մեր ըմբոստները երեւցան ու եկան, բայց ձեռնունայն: Անկարելի եղած էր մօտենալ Մուրատի դիակին, որուն ճիշդ մօտերը թշնամին դիրք բռնելով, անհնար կը դարձնէ մեր կողմէ որեւէ փորձ»(17):*

*Այդ վիճակը կը շարունակուի երեք օր որմէ ետք.- «Շահումեանը կարգադրեց ընդհանուր յարձակողականի դիմելու ամէն ճակատների վրայ, այդ յարձակման ժամանակ միայն մեզ յաջողւում է Մուրատի դիակը ազատել», կը գրէ Ս. Վահագն (18):*

*Պաքուի անկումին, Ս. Վահագն գաղթական բազմութեան հետ նաւով կ'անցնի Էնզէլի: Ապա, տոքթ. Արշակ Պօղոսեանի հետ կը մեկնի Ղազուին «անկէ Համատանի վրայով Պաղտատ անցնելու համար: Անոնց գլխաւոր նպատակն էր որոնել իրենց կորսուած պարագաները եւ Մուրատի ընտանիքն ու զաւակները»: Կարճ ժամանակ անց լուրեր կը հասնին, որ «տոքթ. Արշակը եւ Վահագն միասին մեկներ էին Պաղտատ եւ Պաքուպա» (19):*

*Զինադադարին, Ս. Վահագն կը վերադառնայ Պաքու, ապա Պաթում եւ ծովու ճամբով կ'անցնի Կ. Պոլիս: Ան, իր հօրեղբօրմէն նիւթական միջոցներ ապահովելով կը կազմէ ահաբեկիչ խումբ մը եւ մէջտեղէն կը վերացնէ Մեծ Եղեռնի ընթացքին դաւաճան եւ լրտես հայերը, որոնց շարքին՝ Հմայեակ Արամեանցն ու Պէշիկթաշի լրտես Մխիթար Յարութիւն Մկրտիչեանը (20):*

*Մինչ այդ, քեմալական շարժումը սկսած էր եւ կիլիկահայութեան գոյութեան հարցը դարձած էր հրատապ խնդիր:*

*Ս. Վահագն կը մեկնի Ֆրանսա, կը հանդիպի զօր. Անդրանիկին եւ անոր կ'առաջարկէ իր ծառայութիւնը՝ եթէ զօրավարը ստանձնէ կիլիկիոյ հայկական ուժերու հրամանատարութիւնը (21): (Ապագային Անդրանիկ այդ նպատակին համար կը հասնի Իզմիր, սակայն Ֆրանսական իշխանութիւնները կը մերժեն անոր մուտքը Կիլիկիա):*

*Այս միջոցին, Ս. Վահագն Ֆրանսայի առաջնորդ Վռամշապուհ Վրդ. Քիպարեանի հետ կը կազմակերպէ հանգանակութիւն եւ Արմինիրն Ռիլիֆի միջոցով 15 հազար ֆրանք արժողութեամբ դեղօրայք կը ղրկէ Հայաստան:*

*1920ի սկիզբը Ս. Վահագն կը մեկնի Ամերիկա ու կը լծուի Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան համար նուիրահաւաքի եւ կամաւորագրութեան աշխատանքին: Շատ չանցած, ամերիկահայ 20 կամաւորներու գլուխը անցած, ինք եւս կը փութայ Կիլիկիա (22): Այս մասին կ'անդրադառնայ մամուլը. օրինակի համար «պալքանեան Մամուլ»ը կը գրէ. «Ընկ. Ս. Վահագն եւ Ս. Դ. Հնչակեան կամաւորներ Կիլիկիա կը մեկնին. (սեփական հեռագիր). Նիւ Եորք, 13 Յուլիս 1920: Այսօր կամաւորներու առաջին խումբը՝ ընկ. Ս. Վահագնի հրամանատարութեան տակ եւ ընկ. Մ. Ա. Քէպապճեանի ընկերակցութեամբ, Մարսէյլի վրայով Կիլիկիա մեկնեցաւ»(23):*

*Ս. Վահագն կը հաստատուի Իզմիր, ուր կը հաւաքագրուէին կամաւորները: «Պալքանեան Մամուլ», կը գրէ. «Իզմիրէն հետզհետէ հասան կամաւորական հինգ՝ «Մուրատ», «Ջէլլատ», «Ժիրայր», «Պանդուխտ» եւ «Փարամազ» խումբերը: Ընկ. Ս. Վահագնի հետ պիտի հաւաքեն ուրիշ կամաւորներ: Երէկ քաղաքս (Մերսին- Ե. Ճ.) ժամանեց Ամերիկայի շրջանի Ս. Դ. Հնչակեան կամաւորներու «Աւշարեան» խումբը, ընկ. Մ. Քէպապճեանի հետ միասին: Ոգեւորութիւնը աւելի քան քաջալերական է: Խումբը նախ հանդիպում ունեցաւ տեղիս ընկերներուն հետ» (24):*

*Իզմիր գտնուած միջոցին Ս. Վահագն կը մասնակցի Ս.Դ.Հ.Կ. Նիկոմիդիոյ շրջանի (Իզմիդ, Պարտիզակ, Օվաճըգ», Արսլանպէկ, Ատապազար, Մեծ Գիւղ եւայլն) շրջանային պատգամաւորական ժողովին, ուր կը քննարկուի քեմալական շարժման սպառնալիքը ու նկատի առնելով 1914-18 թուականներու ինքնապաշտպանութեան յաջող փորձը, կ'որոշուի կազմել մարտական ուժ եւ այդ վերստին դնել ընկ. Տօնիկ Տօնիկեանի հրամանատարութեան տակ (25):*

*1921ի սկիզբը, Ս. Վահագն կուսակցական գործերով դարձեալ Փարիզ է (26): Յաջորդ ամիս ան Իզմիր է (27): Տարեվերջին ան Ռումանիա է (28): Իր գտնուած բոլոր շրջաններուն մէջ, Ս. Վահագն կազմակերպչական (յատկապէս մարտական բնոյթի) աշխատանքներուն կողքին, կ'ունենայ նաեւ հրապարակային ելոյթներ: Այդ ելոյթներուն ընթացքին ան կը պաշտպանէ Հայաստանի մէջ նորահաստատ խորհրդային իշխանութիւնները: Այս պատճառով կ'ամբաստանուի որպէս «պոլշեւիկ»: Կը ստիպուի իտալական նաւով մը փախուստ տալ դէպի Պաթում: Կ'անցնի Խորհրդային Հայաստան: Կը գործակցի նոր իշխանութիւններու հետ: Ա. Մռաւեանի ու Ա. Միասնիկեանի թելադրութեամբ քարոզչական աշխատանք կը տանի Ալակեազի փէշերուն ապաստանած սասունցի գաղթականներուն մօտ (29):*

*Ս. Վահագն երկար չի մնար Խորհրդային Հայաստան: Կ. Պոլսոյ վրայով կ'անցնի Ռումանիա, Պուլկարիա, Յունաստան, Կիպրոս եւ ի վերջոյ Ֆրանսա՝ Մարսէյլ, ուր 1924ին կ'ամուսնանայ Փարիզ Վա-*

*Շար.ը էջ 17*

## ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*րեւէմէզեանի հետ: Յաջորդ տարի, վերջնականապէս հայրենիք հաստատուելու մտադրութեամբ կը տեղափոխուի Հայաստան: Երեւանի մէջ կ՚աշխատի որպէս մանկատան տնօրէն:*

*1927ին, Ս. Վահագն վերստին ձեռք կ՚առնէ Թափառականի ցուպը եւ կ՚անցնի Պարսկաստան: Թաւրիզի ընկերները «կազմակերպութիւնը զօրացնելու համար» (30) կ՚առաջարկեն անոր մնալ Պարսկաստան: Սակայն ան կը նախընտրէ վերադառնալ Ֆրանսա:*

*Այդ ճամբուն վրայ, Ս. Վահագն 1928ին կ՚այցելէ Լիբանան, ուր կը մնայ շուրջ տարի մը: Այս միջոցին, անոր ջանքերով 1 Ապրիլ 1929ին կը գումարուի Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի շրջանի Ա. պատգամաւորական ժողովը, որն եւ կ՚ընտրէ Լիբանանի առաջին Վարիչ Մարմինը (31):*

*Ս. Վահագն Մարսէյլի մէջ կ՚ունենայ թշուառ եւ անօգնական ծերութիւն մը: Յառաջացեալ տարիքին եւ թեւին կիսանդամալոյծ վիճակին պատճառով անոր կը մերժեն աշխատանքի ընդունիլ: Դժուարութեամբ կը ճարէ պահակութեան գործ մը (7 օր աշխատանք, օրական 14 ժամ, շաբաթական 450 ֆրանքի դիմաց): Ապրուստի հիմնական միջոցը կ՚ըլլայ տիկնոջ համեստ աշխատավարձը, որ որպէս ուսուցչուհի կը ստանար Պոմոնի հայ եկեղեցւոյ կից գործող հայկական երկօրեայ դպրոցէն: Սակայն կուսակցական անհանդուրժողութիւնը, Ս. Վահագնի ընտանիքը կը զրկէ այդ համեստ եկամուտէն (Թաղականութիւնը կը գտնուէր դաշնակցականներու ձեռքը):*

*Համաշխարհային Բ. պատերազմի տարիներուն ստեղծուած տնտեսական տագնապին պատճառով, Ս. Վահագնի ապրուստը աւելի կը դժուարանայ: Ֆաշիստական գրաւման ժամանակ վրայ կը հասնի նաեւ «պոլշեւիկ» ամբաստանութիւնը: Ս. Վահագն, իր յուշագրութեան մէջ Ֆրանսայի ազատագրութիւնը ֆաշիստական բռնագրաւումէն կը ներկայացնէ որպէս իր համոզումներուն յաղթանակը բռնատիրութեան դէմ:*

*Կարելի չէ յուզումով եւ ցասումով չկարդալ, դժուարին այդ մթնոլորտին մէջ Ս. Վահագնի կողմէ թուղթին յանձնուած սա տողերը. «Այսպէս էլ այս տողերը գրողս, 40 երկար տարիներ հայ ժողովուրդին ազատագրութեան տաճարի առջեւ տանջուեցանք, նիւթական, բարոյական նոյնիսկ ֆիզիքականնիս վնասեցինք, ներկայիս փող չունինք, գործ չունինք, ամենայիմար մարդն ենք դարձած այս մամոնայի ետեւից վազող հայերի աչքում»:*

*1947ին, Ս. Վահագն իր տիկնոջ հետ, կառավաններու առաջին խումբով կը ներգաղթէ Հայաստան:*

*Կը մահանայ 1948ին:*

*Ս. Վահագնի գերեզմանը ցարդ կը մնայ անյայտ:*

***********

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ**

9. Միքայէլ Վարանդեան, «Մուրատ», տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1931, էջ 254:

10. Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա. հատոր, տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1925, էջ 501-5021

11. Միսաք Թորլաքեան, «Օրերուս Հետ», Թեհրան, 1982, հրատ. «Սասուն», էջ 395-396:

12. Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ. հատոր, տպ. «Հայրենիք», Պոսթըն, 1929, էջ 100-101:

13. «Հայրենիք», 1952 Յուլիս, թիւ 7, Ե. Խաթանասեան «Մուրատի եւ Սեպուհի հետ», նաեւ Սեպուհ «Էջեր իմ Յուշերէն», Բ. հատոր, էջ 144:

14. Սեպուհ, «Էջեր իմ Յուշերէն», Բ. հատոր էջ 147:

15. Խիկար Բարսեղեան, «Մարքսիզմի Տարածումը Հայաստանում», Բ. հատոր, ՀՍՍՌ ԳԻՏ. Ակադեմիայի Պատմ. Ինստիտուտի հրատ., Երեւան, 1975, էջ 418:

16. «Յուշարձան Նուիրուած Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին», հրատ. Ս.Դ.Հ.Կ. Ֆրանսայի շրջանի, Փարիզ, 1930, Ս. Վահագն, «Ինչպէս ինկաւ Պաքուն»:

17. Սեպուհ, «Էջեր իմ Յուշերէն», Բ. հատոր էջ 180-181:

18. «Յուշարձան Նուիրուած Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին», հրատ. Ս.Դ.Հ.Կ. Ֆրանսայի շրջանի, Փարիզ, 1930, Ս. Վահագն, «Ինչպէս ինկաւ Պաքուն»:

19.17. Սեպուհ, «Էջեր իմ Յուշերէն», Բ. հատոր էջ 180-181:

20. «Հնչակեան Տարեգիրք», հրատ. Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի շրջանի, էջ 246:

21. Աւետիս Թէրզիպաշեան, «Անդրանիկ», տպ. «Ա. Տէր Յակոբեան», Փարիզ, 1942, էջ 390-392:

22. Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան, Բ. հատոր, Պէյրութ, 1963, էջ 92 եւ 95:

23. «Պալքանեան Մամուլ» (յաւելուած), 1920, Օգոստոս 1:

24. «Պալքանեան Մամուլ», 1920, Հոկտեմբեր 2:

25. «Յուշարձան Նուիրուած Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին», Ս. Վահագն, «Ինչպէս ինկաւ Պաքուն»:

26. Ս. Վահագնի Փարիզէն գրած 1921 Յունուար 2 եւ Յունուար 19 թուակիր նամակները, Ս.Դ.Հ.Կ. Եգիպտոսի գործադիր մարմին: Հնչակեան արխիւ:

27. Ս. Վահագնի Իզմիրէն գրած 1921 Փետրուար 15 եւ Ապրիլ 25 թուակիր նամակները Ս.Դ.Հ.Կ. Եգիպտոսի գործադիր Մարմնին: Հնչակեան արխիւ:

28. Ս. Վահագնի Ճորճովայէն գրած 1921 Դեկտեմբեր 6 թուակիր նամակը Ս.Դ.Հ.Կ. Եգիպտոսի գործադիր մարմին: Հնչակեան արխիւ:

29. «Հնչակեան Տարեգիրք», հրատ. Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի շրջանի, Բ. տարի, Փրովիտենս, 1932, Ս. Վահագն (կենսագրական հակիրճ նօթեր»:

30. «Հայրենիք», 1950 Յունուար, թիւ 1 (288). Գրիգոր Եղիկեան «Փաստաթղթեր Հնչակեաններու Գործունէութենէն», (Ս.Վահագնի նամակը Գ. Եղիկեանին, Թաւրիզ, 1927 Սեպտեմբեր 12):

31. «Արձանագրութիւն-Տրջաբերական Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Տրջանի Բ. Պատգամաւորական ժողովի», Պէյրութ, 1931 Մայիս 13: Հնչակեան արխիւ:

**massisweekly.com**
**updated every Friday**

## «ԻՍԿ ՄՆԱՑԱԾԸ «ՀՈՐՈՎԵԼՆԵՐ» ԷԻՆ»

*Շարունակուած էջ 2-էն*

*ան, պատրաստ չէր խորհրդարանական այս կարգի զարգացումների, ռէալ բանավէճի՝ թէ՝ գաղափարական, թէ՝ անհատական մակարդակներում:*

*Աշոտեանը բաւականին բարձր «դո»-ով տեղը դրեց բոլոր պապից կաթոլիկ-կաթոլիկուհիներին (ԲՀԿ-ական Վահէ Յովհաննիսեանի նեարդերը չդիմացան, նա ցուցադրաբար դուրս եկաւ դահլիճից), այդ թւում եւ՝ նախկին կոալիցիոն գործընկեր ԲՀԿ-ին: «Մենք մենք ենք եւ այստեղ ենք, իսկ դո՞ւք որտեղ էք. ի՞նչ է նշանակում ձեր նշած «ձախողուած կառավարութիւնը», երբ այդ կառավարութեան մէջ ունեցել էք չորս պորտֆել, ասել է՝ երեսունհինգ տոկոս իշխանութիւն»,- հարցրեց Աշոտեանը՝ եւս մէկ հարց ուղղելով վերջիններիս. դաշնակցութիւնը լքեց կոալիցիան գաղափարախօսական պատճառներով, ինչո՞ւ այս օրերին չհնչեց ԲՀԿ-ի կողմից ընդդիմադիր լինելու մասին յայտարարութիւնը: Եւս մէկ հետաքրքիր դիտարկում կատարեց Աշոտեանը. «Ֆորին Փոլիսը»՝ աշխարհում ամենայայտնի փորձագիտական հանդէսը, օրերս արձանագրել է, որ «ձախողուած կառավարութեամբ» այս Հայաստանն ամենակայուն երկիրն է տարածաշրջանում: «Համակերպուէք ընտրութիւնների արդիւնքների հետ, յետընտրական բարդոյթները յաղթահարէք»,- խորհուրդ տուեց Աշոտեանը: Բոլորին: Եւ յատկապէս չյաղթահարուածներին: Ի՞նչ մարտավարութիւն էին ընտրել հակընդդէմ ուժերը: Ասել, որ նրանց սկսած բանավէճում առկայ էր նաեւ վեկտորալ բաղադրիչը, ճիշդ չի լինի, այնուհանդերձ, ակնառու էր, որ Արեւմուտք սիրող օպոնենտներն առաւել քաղաքակիրթ, գաղափարական, պակաս պոպուլիստական էին, քան Ռուսաստան սիրողները, որոնք, դատաւորի կեցուածքով, առաւել մեղադրողներ էին, պահանջատէր: Իսկ անձի համար պայքարի ելածներն ընդամէնը զգայական էին, որ մատնում էին իրենց ենթագիտակցական-ֆրոյդիստական անկեղծ պաթոսը:*

*«Միջին» վիճակում էր Գուրիկ Յակոբեանից «մաֆիոզի» անուանուած (դէ՝ եթէ թարգմանենք պարոն Յակոբեանի ասածը՝ շատ կառուցողական «թարգմանութեամբ», ապա հենց այդպէս էլ թարգմանւում է, մանաւանդ որ Օսկանեանը չի ցանկանում որեւէ կերպ պատասխանել «մեղադրանքին», այն էլ ԱԱԾ ղեկավարի արած Օսկանեանը, որն իր ամբողջ ելոյթի ժամանակ մատն այնպիսի արագութեամբ ու տեմպով էր թափ տալիս, որ ասինք՝ հրեա կը պոկուի: Ի դէպ, նոյնակերպ մատը բոլորի վրայ թափ տալով էր խօսում ՀԱԿ խմբակցութեան ղեկավար, Օսկանեան շատ սիրող Լեւոն Զուրաբեանը:*

*Գաղափարական, թէկուզ եւ փոքր-ինչ տեսական էին նախկին վարչապետ Հրանտ Բագրատեանի արգումենտները, բայց եւ՝ բաւականին քաղաքակիրթ: Նոյնը՝ Ալիկ Արզումանեանի ելոյթը: Հետաքրքիր էր նաեւ դաշնակցութեան յանուսյան պահուածքը. ահաւոր մշուշի մէջ «մնացած», Ռուսաստանում «Պատրիս Լումումբա» աւարտած Արմէն Ռուստամեանը, ի տարբերութիւն տնտեսութիւնից հասկացող, քաղաքակիրթ քննադատութեան կողմնակից Արծուիկ Մինասեանի: Ելոյթ ունեցաւ նաեւ երբեմնի սոցապահովութեան նախարար Աղուան Վարդանեանը: Քննադատական: Մի խօսքով, կառավարութիւնը մեծամասնութիւն ունէր եւ, անկախ նրանից, միւս ընդդիմադիր ու չընդդիմադիրները (էս ԲՀԿ-ն է) որքան էլ շատ ելոյթ ունենային, դէմ լինէին առաջին հերթին վարչապետին, յետոյ նոր՝ կառավարութեանը, յետոյ՝ իշխանութեանն ինքնին, ապա եւ՝ յանուն ում դէմ լինէին (իւրաքանչիւր ընդդիմադիր-չընդդիմադիր ինքը կ՚իմանար, թէ իր սրտում ում համար է պայքարում վարչապետի դէմ եւ ուզում է յատկապէս ով լինի վարչապետ, ումից էր յատկապէս ինքը վրէժ լուծում), ինչպէս քննարկումն ամփոփեց Գալուստ Սահակեանը, ընդդիմադիրներիդ այդ բոլոր ցանկութիւններն ու խոստումները՝ ժողովրդին տուած, «մենք՝ ՀՀԿ-ն է իրականացնելու, իսկ մնացածը «հորովելներ» էին: Կարծես: Կառավարութեան ծրագիրն անցաւ ոչ աւել, ոչ պակաս 75 ձայնով: Կառավարութիւնը ծափահարուեց:*

*Ծափահարութեան էր արժանի նաեւ ընդդիմութիւնը: Չընդդիմադիրների մասով լռում ենք. առանց էն էլ սրտները շատ նեղուած կը լինի:*

*«ԻՐԱՏԵՍ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**------------------------ **Fax :** -------------------------

# ՅԵՏ ՄԱՀՈՒ ԶՐՈՅՑ՝ ՏԻԿ. ԱՆԺԷԼ ԿՈՒԺՈՒՆԻԻ ՀԵՏ



Ու օր մը յանկարծ, մտքիդ մէջ կը վերածնի դէմք մը, դէպք մը, ներկայութիւն մը ու կը սկսիս մտածել այդ մասին, կ՚արթննան մէջդ, տխուր, ուրախ, քաղցր մտածումներ ու գրիչդ կը յանձնես թուղթին, ուրիշներուն եւս սեփականութիւնը դարձնելով զգացումներդ:

Եզական ու առինքնող, մշտաժպտուն Անժէլը, եղաւ իմ պաշտօնակցուհիս, Հաճնոյ Թաղի, Ս. Սահակ եւ Մեսրոպ ազգային վարժարանին մէջ: Ես հայերէնի ուսուցչուհի, ինք՝ Արաբերէն լեզուի:

Մտերմացանք, պաշտօնակից ըլլալէ աւելի, դարձանք լաւ բարեկամներ, եւ երկար տասը տարիներ վայելեցինք իր հիւրընկալ, շէնշող եւ խորհրդատու անձնաւորութիւնը ու մինչեւ այսօր, մտքիս ու հոգիիս մէջ դրոշմուած են իր բարի ու քաջարի խրատները, որոնք կերտեցին իմ մէջս, բազմացուցին հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ ընկերային հարցերու մօտեցումի վերաբերմունքս:

Մենք, հաճընցիներս, միշտ հպարտ կը զգանք Հաճընով եւ հաճընցիութեամբ: Մեզմէ դուրս, ամէնքը «դրսեցի» են: Տիկին Անժէլը «դրսեցի» էր: Հաւատացէք այնքան մօտ էր այդ «մոլեգին» խտրականութեան, ինքն ալ միացաւ մեզի եւ նոյնիսկ պաշտօն ստացաւ, Հաճնոյ Հայրենակցական Տիկնանց Միութեան խումբին, որպէս Յարութիւն Կուժունիիի «Հաճընցի հարցը»:

Տիկ. Անժէլը, դուստրն էր Արսէն Կիտուրի: Արսէն Կիտուր մեծութիւն մըն էր: Հայաստանի առաջին հանրապետութեան Իրաքի հայոց դեսպան, մեծ կուսակցական, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, դասախօս հայ ազգի նուիրուալ զինուորական, որ կերտեց ու դաստիարակեց նոր սերունդ մը, հայրենասիրական ոգիով եւ հայ դատի պաշտպան երդուեալներով:

Անժէլը, մեծցած ու սնուած էր իր հօր դաստիարակութեամբ, եղաւ տիկինը ուրիշ «Մեծ մարդու մը», յանձինս Հաճընցի տիար Յարութիւն Ճէրէճեան-Կուժունիի, որ շուրջ կէս դար եղաւ ու մնաց ղեկավարի դիրքի վրայ, միշտ խոհեմ, բեղուն գործունէութեամբ, հայ դատի եւ հայութեան միասնականութեան ջատագովը հանդիսացող:

Ընդհանրապէս յետ մահու մահախօսականները, գովաբանական եւ շռնդալից արտայայտութիւններով լեցուն կ՚ըլլան: Անժէլը այդ մէկը չէր որ սիրէր գովաբանուիլ: Համեստ, ծանրաբարոյ եւ հաւասարակշռուած խօսքերով, կը դիմագրաւէր ամէն խօսակցութիւն եւ գործընթացք:

Ապրեցաւ, հայութեամբ, սիրեց ու սիրուեցաւ շուրջիններէն, իր հարազատներէն, բարեկամներէն, պաշտօնակիցներէն, հայ թէ օտար բարեկամներէն եւ այսօր, յետ մահու կ՚ուզեմ ըսել իրեն.

«Եկար, տեսար եւ յաղթեցիր»:

Եկար, ըլլալու զաւակը Արսէն Կիտուրի, կինը մեծարգոյ ու բազմատաղանդ Ազգային գործիչի, դաստիարակը հայ մանուկին, սիրասուն հարսը հաճընցիներուն եւ քեզ հետ պաշտօնավարող ուսուցիչներու հոյլին, սիրելի ընկերուհին:

Շատ բան տեսար այս աշխարհէն, գնա՛, միացիր ծնողքիդ, ամուսնոյն եւ բոլոր անոնց, որոնք քեզմէ առաջ մեկնեցան այս աշխարհէն: Եթէ հանդիպիս հաճընցիներու ըսէ՛ իրենց մի՛ վախնաք, հանգիստ վայելեցէք դրախտի մեծութիւնը, Հոկտեմբեր ամսուան մէջ «Հաճնոյ մատաղով», խունկ ու պատարագով ձեզ կը յիշեն ու կ՚օրհնեն ձեր յիշատակը:

Ըսէ՛ք, հաճընցիներուն բարձրաղաղակ:

Նոր Հաճընը, կանգուն է, հայրենի հողին վրայ:

Լուսաճաճանչ ու պայծառ ճակատդ համբուրող ու քեզ յաւերժական հանգիստ մաղթելով կը փակեմ խօսակցութեանս թելը, լոյս ու աղօթք առ ի քեզ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Սիրով ու յարգանքով,
Երէցկին Արաքսի Թաքուլեան

# ԷԼԻԶԱԲԷԹ Բ.Ի ԹԱԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 14-էն*

հին շնորհալիօրէն կը խոնարհէր ի նշան շնորհակալութեան:

Ապա Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսի հարցման եւ Թագուհիի փափաքին վրայ տեղի ունեցաւ երդման արարողութիւնը: Յաջորդ արարողութիւնը Սբ. Գիրքի մատուցումն է: Սկովտիոյ եկեղեցւոյն ներկայացուցիչը Սբ. Գիրքը յանձնեց ըսելով՝ «Հոս է իմաստութիւնը, այս է արքայական օրէնքը, ասոնք են Տիրոջ կենաց պատգամները»: Յետոյ սկսաւ Ս. Հաղորդութեան արարողութիւնը. երգեց 400 հոգինոց երգչախումբը. հատուածներ կարդացուեցան Պետրոս Առաքեալի թուղթէն եւ Մատթէոսի Աւետարանէն:

Թագուհին իսկոյն իր վրայ առաւ ճերմակ պարզ վերարկու մը, ապա կրեց օծման ոսկեթել վերարկուն: Նախքան օծման արարողութիւնը Թագուհին մեկդի դրաւ պատմուճանները, վերցուց ադամանդակուռ թագը գլխէն, ու հանեց պարանոցէն կախուած զարդարանքները: Իմաստը ասոր՝ «մերկանալ աշխարհային զարդերէն, երբ Տիրոջ կը նուիրուի»: Թագուհին առաջին անգամ ըլլալով նստաւ, եւ օծման արարողութիւնը կատարուեցաւ ամպհովանիին ներքեւ, ժողովուրդէն ծածուկ, ոչ ոք տեսաւ օծումը, միայն կը լսուէր ձայնը Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսին, որ կ՚ըսէր.- «Թող օծուի գլուխդ սուրբ իւղով, ինչպէս թագաւորներ, եկեղեցականներ եւ մարգարէներ օծուեցան»: Նախ օծուեցան երկու ձեռքերը, ապա սիրտը եւ գլուխը. յետոյ Արքեպիսկոպոսը օրհնեց Թագուհին, որ յաջորդաբար ստացաւ մականը, պետական սուրը, ադամանդակուռ սուրը, մատանին եւայլն:

Արարողութիւնը հասաւ իր գագաթնակէտին՝ երբ Թագուհին գլխուն դրաւ Սբ. Էտուըրտի Թագը:

Եւ յանկարծ աղմուկը պոռթկաց. էպին լեցնող եօթը հազար հոգիները միաբերան երեք անգամ պոռացին՝ «Աստուած պահէ Էլիզապէթ Թագուհին»: Փողերը սկսան ուժգնօրէն հնչել, եւ Լոնտոնի բոլոր զանգակները սկսան զարթնել: Դուրսը սաստիկ անձրեւ կար, բայց ժողովուրդը տեղէն չէր շարժէր եւ շունչը բռնած կը սպասէր Թագուհիի դուրս ելլելուն:

Ներսը արարողութեան վերջին մասը տեղի կ՚ունենար. նախ եպիսկոպոսներ ծունկի եկան Թագուհիին առջեւ, յետոյ ծունկի եկաւ իր ամուսինը՝ Էտինպուրկի դուքսը, որ ըսաւ. «Ո՛վ Աստուած, օգնէ ինծի». Թագուհին չափազանց յուզուած էր. յուզուած էր նաեւ իր մայրը, որ վերէն կը դիտէր, իսկ մօրը քով կեցող փոքրիկ իշխան Չարլզը ապշահար կը դիտէր բոլոր անցուդարձերը: Ամուսինը ոտքի ելլելով դպաւ Թագին, ապա համբուրեց իր կինը այտէն: Յետոյ իշխաններ եւ դուքսեր շարքով եկան եւ հաւատարմութիւն յայտնեցին Թագուհիին: Ի վերջոյ, Անգլիոյ եւ Հասարակապետութեան բոլոր անկիւններուն մէջ մարդիկ երգեցին «Կատ Սէվ տհը Քուին» մաղթերգը:

Տաճարէն դուրս ելլելէ առաջ, Թագուհին եւ իր ամուսինը ծնրադիր մօտեցան Ս. Հաղորդութեան սեղանին եւ ընդունեցան Տիրոջ Ս. Մարմինն ու արիւնը:

Արարողութիւնները վերջ գտան: Հին Անգլիական աւանդութիւններէն ոչ մէկ բան խախտած էր:

Լոնտոնի փողոցներուն մէջ շուրջ չորս միլիոն մարդիկ կ՚սպասէին վերջին չքերթին, հաւանաբար աննախընթաց էր պատմութեան մէջ՝ այսքան ժողովուրդով տողանց մը:

Տակաւին անդին, Միացեալ Նահանգներու. Ֆրանսայի, Գերմանիոյ մէջ եւ այլուր, միլիոնաւոր մարդիկ թելեվիզիոնով հետեւեցան բոլոր արարողութիւններուն: Մենք եւս թելեվիզիոնի գործիքին առջեւն էինք եւ վստահ եմ որ աւելի յստակ տեսանք տաճարին անցուդարձերը՝ քան բուն իսկ տաճարին մէջ գտնուող հրաւիրեալները:

Ուեսթմինսթըր էպիէն մինչեւ Պըքինկէմ պալատը տեղի ունեցաւ յաղթական երթը. ժողովուրդը անձրեւին տակ, խելայեղ հրճուանքով ողջունեց իր Թագուհին: Ի վերջոյ, Թագուհին քանի մը անգամ երեւցաւ պալատի պատշգամին վրայ եւ հրաժեշտ տուաւ իր հպատակներէն:

### Ի՞ՆՉ ԿԸ ՄՏԱԾԷ ԱՆԳԼԻԱՑԻՆ

Հետաքրքրական է գիտնալ թէ անգլիացի ժողովուրդը ի՞նչ կը մտածէ Թագուհիին, արքայական ընտանիքին եւ սահմանադրական միապետութեան մասին: Զանազան անձնաւորութիւններու հետ ունեցած խօսակցութիւններս եւ մանաւանդ թերթերու մէջ յայտնուած կարծիքները բաւարար եղան որոշ գաղափար կազմելու համար Անգլիացիներու մեծամասնութեան զգացումներուն մասին:

Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոսը վերջերս գրեց յօդուած մը, որուն մէջ կ՚ըսէր. «Թագադրութեան չենք կրնար մասնակից ըլլալ՝ եթէ նախ չունենանք գիտակցութիւնը թէ պէտք ենք հաւատարիմ ըլլալ Թագուհիին եւ երկրիս օրէնքներուն. երկրորդ, պէտք է հաւատանք

Աստուծոյ, որովհետեւ, Թագադրութեան ատեն կը նոյնանան այս երկու բաները մեծ արարողութեամբ մը: Ազգայինը եւ Կրօնականը կը միախառնուին: Թագուհին առանց ժողովուրդի պիտի նմանէր Քրիւզոյի գտած ոսկիին եւ մենք առանց Թագուհիին չենք կրնար ապրիլ»:

Եւ երկրին կրօնապետին այս ազնիւ զգացումները կը բաժնեն պարզ արհեստաւորներն ու գիւղացիները: Անգլիացին մեծ յարգանք կը տածէ իր վեհապետին հանդէպ. զայն կը նկատէ ազգային միասնականութեան գերագոյն խորհրդանշանը:

Ի տես այս իրողութեան, ցաւով անդրադարձայ մեր գաղթահայ կեանքի տխուր երեւոյթներուն. մեր մէջ կը պակսի յարգանքը մեր առաջնորդներուն, ղեկավարներուն, մեծերուն հանդէպ: Կարելի՞ է մոռնալ յարգանքի լուրջ պակասը երջանկայիշատակ Գարեգին Վեհ. Կաթողիկոսին հանդէպ: Կը կարծեմ թէ լաւ կ՚ըլլայ եթէ օրինակ առնենք Անգլիացիներէն գէթ այս կէտին մէջ:

Յարգենք մեր կրօնապետները, մեր առաջնորդները: Անգլիացիք առ հասարակ կը մտածեն թէ արքայական ընտանիքը «վեր է ամէն քննադատութենէ»: Արդեօք մենք հայերս պիտի կարենա՞նք օրինակ առնել այս մեծ ժողովուրդէն. պիտի սորվի՞նք յարգել մեր կաթողիկոսները եւ ղեկավարները: Էլիզապէթ Բ.ի թագաւորութիւնը նոր անկիւնադարձ մը կը նկատուի Անգլիոյ պատմութեան մէջ: Բրիտանական Հասարակապետութեան անդամներուն միջեւ կապերը սերտացնող, Հասարակապետութեան ներքին միասնականութիւնը ամրապնդող եւ յաչս աշխարհի անգլիական կայսրութեան ուժն ու հմայքը պատկերացնող դէպք մը հանդիսացաւ ան: Թագադրութեան բոլոր արարողութիւնները իսկապէս տպաւորիչ էին անտարակոյս, հանդիսութիւնները եւ արարողութիւնները թելեվիզիոնի վրայ դիտող շուրջ 30 միլիոն անգլիացիները, ամերիկացիները, գերմանացիները, ֆրանսացիները եւ ուրիշներ մեծապէս տպաւորուեցան: Կասկած չկայ որ Թագուհիին անձն ալ համակրութիւն յառաջացուց իր եւ գահին շուրջ: Իր պարզութեամբ, իր ժպիտով եւ իր հեզահամբոյր բնաւորութեամբ՝ Էլիզապէթ սիրուած է բոլորէն:

Կ՚ըսուէր թէ Վարչապետ Չրչիլ, տարիքը առած եւ յոգնած մարդ,- քաղաքական կեանքէ չքաշուած երկու փառասիրութիւն ունէր, որոնցմէ առաջինը փառաւոր եւ աննախընթաց հանդիսութեամբ Թագուհի օծել տալ Էլիզապէթը, իսկ երկրորդը՝ իրագործել համաշխարհային խաղաղութիւնը գործակցելով միւս մեծ պետութեանց ղեկավարներուն հետ: Չրչիլ իրագործած եղաւ իր առաջին նպատակը:

Այս պահուս, մինչ Էլիզապէթ Բ. Թագուհին իր պալատին մէջ կը ջանայ հանգիստ ընել եւ յոգնութիւնը առնել, երկրին մէջ տօնախմբութիւնները կը շարունակուին, եւ ժողովուրդը շարժապատկերի պաստառին վրայ դարձեալ կը դիտէ արարողութիւնները, տողանցքն ու հանդիսութիւնները:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Հալէպի Կիլիկեան Վարժարանի 90-ամեակի ճաշկերոյթ-տօնակատարութեան առթիւ Կիլիկեան Բարգործական Միութեան կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:*

| | |
|---|---|
| *Սինան Սինանեան* | *$5000* |
| *Սեդրակ Աճէմեան* | *$4000* |
| *ՍԴՀԿ Վարիչ Մարմին* | *$2000* |
| *Ճորճ Գուգուեան* | *$2000* |
| *Յակոբ Արճեան* | *$700* |
| *Գօրօլին Գուգուեան* | *$500* |
| *Կարօ Անի Պէքարեան* | *$500* |
| *Թադէոս Քէօրօղլեան* | *$500* |
| *Լեւոն Գալլագեան* | *$500* |
| *Գրաճեան հաստատութիւն* | *$500* |
| *Յարութ Մարաշլեան* | *$500* |
| *Ճորճ Սիպիլ Աբրահամեան* | *$500* |
| *Հայկ Վերճինեա Տէրտէրեան* | *$300* |
| *Վարդան Այնթապլեան* | *$300* |
| *Ալէքս Գայեանէ Պէքքէրեան* | *$200* |
| *Բիւզանդ Շօհմէլեան* | *$200* |
| *Յովիկ Լաչինեան* | *$200* |
| *Իրաքահայ Միութիւն* | *$150* |
| *Միսաք Ճիհանեան* | *$150* |
| *Խաչիկ Ճանոյեան* | *$100* |
| *Յակոբ Մարտիրոսեան* | *$100* |
| *Հրաչ Արճեան* | *$100* |
| *Վահէ Մարոնեան* | *$100* |
| *Լեւոն Մուրատեան* | *$100* |
| *Սիլվա Դանաշեան* | *$100* |
| *Յարութիւն Լուսին Պոյամեան* | *$100* |
| *Մարթին Խաչատուրեան* | *$100* |
| *Մարի Թաշճեան* | *$100* |
| *Ալիս Մազմանեան* | *$50* |

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

*Պրն. ՅԱԿՈԲ ՀԷԼՎԱՃԵԱՆ ընդ ՕՐ. ՆԱՆՈՐ ՄԱՆԿՐԵԱՆ*
*ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼՔ*
*23 Յունիս 2012 Փասատինա*

*«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնս կը շնորհաւորէ նորապսակ զոյգը եւ անոնց ընտանեկան պարագաները, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կիւրեղ եւ Շողիկ Մանկրեանը:*

## ԽՆԴԱԿՑՈՒԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Ռաֆայէլ եւ Տանիէլ Մաթոս բախտաւորուած են առջինեկ աղջիկ զաւակով մը եւ անուանած Նուարդ-Էվըլին:*

*Այս առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ նորածինն ու անոր ծնողները, մասնաւորաբար մեծ հայրն ու մեծ մայրը՝ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Նուարդ Մուշեանը:*

## ԽՆԴԱԿՑՈՒԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Զէտ եւ Մարալ Էլվուտ բախտաւորուած են երկուորեակ դուստրերով եւ անուանած՝ Սառա եւ Օլիվիա:*

*Մեր շնորհաւորութիւնները նորածիններուն եւ անոնց ծնողներուն, մասնաւորաբար մեծ հօր եւ մեծ մօր՝ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ազատուհի Մութաֆեաններուն:*


# Burbank Airport

## Bid Request General Contractors

**Qualified "A", licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 PM, July 26, 2012 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E12-04, AIRCRAFT RESCUE AND FIRE FIGHTING BUILDING EXTERIOR - ROOF. The Work in general consists of, but is not limited to, installation of a new polyurethane foam roof system on Hangar 35 including other miscellaneous roofing tasks at the Bob Hope Airport Fire Station. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at www.bobhopeairport.com under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Call Bobbi Greenspahn at (818) 565-1305 for more information. A pre-bid conference will be conducted on July 12, 2012, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505. Located at the corner of Sherman Way and Clybourn. Certified Disadvantage Business Enterprises and Small Businesses are strongly encouraged to participate.**


## ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ՇՈՒՐՋ

*Շարունակուածէջ 15-էն*

*ներ, որոնք հեռու մնացին մեծութեան շուքէն...: Բանաստեղծ Վահագն Դաւթեան զայն արժեւորողներէն եղաւ: 1965-ին «Հայաստան» հրատարակչութեան կողմէ հրատարակուած «Տատրագոմի Հարսը» հատորին,- որ համանուն վիպերգին հետ «Արա աստուած»ն ու «Վահագն» ալ կը բովանդակէ,- յառաջաբանին մէջ Վահագն Դաւթեան գրեց.*

*«Զօրեղ եւ անհաւասակշիռ տարերքի բանաստեղծ է Զարեանը:*

*Նրա տաղանդի լաւագոյն առանձնայատկութիւններից մէկը պատկերաւոր շքեղ մտածողութիւնն է, որ զարմանալիօրէն թարմ է, էքսպրեսիւ ու միշտ միտում է մոնումենտալութեան:*

*Բանաստեղծական միտքն ու պատկերը նրա մօտ համարեա միշտ ռոմանթիք շաղախ ունեն, սլացիկ են, վերացականութեան մէջ՝ կոնկրետ եւ կոնկրետութեան մէջ՝ նուրբ ու թափանցիկ: Զարեանը հոգեբանական բարդութիւնների մէջ պարզ է, խոր ու համոզիչ»:*

*Անկախաբար այս գնահատութենէն՝ Կոստան Զարեանի իրաւ մեծութիւնը ըստ արժանւոյն չարժեւորուեցաւ խորհրդային տարիներուն, իր Հայաստան հաստատուելէն ետք ալ:*

*Անկախութեան շրջանին Սարգիս Խաչենց հրատարակչատունը, գործակցութեամբ եւ խմբագրութեամբ հեղինակաւոր գրականագէտ-արուեստաբան Եուրի Խաչատրեանի, յաջորդաբար լոյս ընծայեց Կոստան Զարեանի «Սպանիա»ն (1998), «Միացեալ Նահանգներ»ը (2002), «Բառերի Ոսկին» (2009), «Դէպի Արարատ»ը, «Գիրք Դիւցազներգութեանց» (2003), «Անցորդը եւ Իր Ճամբան» (2010): Հրատարակչական ճաշակին հետ կ'արժէ ընդգծել խմբագրողին ոչ միայն հմտալից, այլեւ խորաթափանց եւ իւրօրինակ արժեւորումները, որոնք ճշմարտօրէն կը ցայտեցնեն մեծ գրողին ստեղծագործական սխրագործ աշխարհը: Կոստան Զարեանը Եուրի Խաչատրեանով գտաւ իր գրականութիւնը լաւագոյն կերպով մեկնող վերլուծաբանը:*

*Սփիւռքահայ կարգ մը երդուեալ հակախորհրդային գրականագէտներու համար Կոստան Զարեանի կուռքը տապալած եւ գրական պատուանդանէն վար առնուած էր գրագէտին Խորհրդային Հայաստան փոխադրուել էն, ըրած յայտարարութիւններէն, եւ իր նշանաւոր վէպին՝ «Նաւը Լերան Վրայ»ի խորհրդային գրաքննութեամբ կատարուած չարափոխութենէն ետք . . . : Մինչեւ օրս կը շարունակուի հակազարեանական գրոհը...: Ինչ միտումներով եւ դիտումներով ալ գրուած ըլլար Պ. Սնապեանի «Աւազախրած Նաւը» պարսաւագիրը՝ իր բացայայտումներով, ախտաճանաչումներով եւ բաղդատական քննարկումներով՝ հակառակ հեղինակին հասցուած վիրաւորանքներուն, գրականութեան պատմութեան համար կը մնայ վաւերաթուղթ մը, ինչպէս նոյն գրականութեան պատմութեան համար անջնջելի արատ եւ խարդախուած եղծում կը մնան վէպը իր էութենէն պարպած ջնջումները, կրճատումները, յաւելումները եւ փոփոխութիւնները...: Պէտք էր թիրախ դարձուէր հեղինակէն աւելի գրաքննութեան աւերիչ ձեռքերը:*

*«Նաւը Լերան Վրայ» վէպը ոչինչ կորսնցուցած է իր արժէքէն, քանի կան Պոսթոնի առաջին հրատարակութենէն ետք (1943), Կիլիկիոյ կաթողիկոսարան ի Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի վերահրատարակութեան մատենաշարին Բ. տպագրութիւնը 2002-ին:*

*Վերջին տուեալներու համաձայն՝ «Ճնշումներու եւ սպառնալիքներու» տակ պարտադրուած են հեղինակային փոփոխութիւնները եւ նուաստացնող գիջումները: Ինչ որ ալ եղած ըլլան դրդապատճառները՝ արդարանալի չէ կատարուածը...:*

*Ինչպէս ընդունայն են գինք նսեմացնելու եւ արժեզրկելու ծառայող ժամանակավրէպ յօդուածները:*

*Հակառակ խնդրայարոյց բոլոր արարքներուն եւ կեցուածքներուն՝ Կոստան Զարեանը իր գրական հսկայի վիթխարի կերպարով, վաստակով, փառքով եւ մեծութեան կշիռով կը պահէ հայ գրականութեան մէջ իր գրաւած բարձունքի անխախտելի դիրքը:*


# VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆին



**Vahe Atchabahian**
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
**626-354-5924 • vamedia@yahoo.com**


2012
AGBU-AYA | ՀԲԸՄ-ՀԵԸ
LOS ANGELES
WORLD GAMES
July 28th - August 5th 2012
OPENING CEREMONY
Sunday July 29th, 2012
Pasadena City College, Pasadena, CA
VICTORY BALL
Saturday August 4th, 2012
Universal Studios Backlot
For more information or volunteer opportunities call: (626) 794 7942
info@agbugames.com | www.agbugames.com
SPONSORS
HI-TECH ELECTRO DESIGN
SecureNet
karoun
FIRST CALIFORNIA BANK
EH National Bank
HAIG'S
Voskos
Greek Yogurt
MT SIERRA COLLEGE